



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 95 2016

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Միեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 21.11.2016թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 3,75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ԱԺ որոշումը Արթուր Դավթյանին ՀՀ գլխավոր դատախազ նշանակելու մասին	3
ՀՀ Նախագահը ներկայացրել է նորանշանակ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին	3
ՀՀ Նախագահի հրամանագիրը Հայկ Ասլանյանին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ նշանակելու մասին	4
Պարզևատրումներ ՀՀ Նախագահի հրամանագրերով	4
Պարզևատրում ՀՀ Գլխավոր դատախազի հրամանով	4
ՀՀ դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու մասին ՀՀ Գլխավոր դատախազի հրամանը	5

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀՏ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ղեկավարին	6
ՀՀ Գլխավոր դատախազն ընդունել է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին	7

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան Հայաստանի Հանրապետության 2005թ. սահմանադրական փոփոխությունները կառավարության կազմավորման և վարչապետին ազատելու հարցերում	8
Թամարա Շաքարյան Դատախազության սահմանադրաիրավական հիմքերի իրացման արդի ուղենիշները	15

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Հայկ Կեսոյան Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացման հեռանկարները	28
Արմեն Ղուկասյան, Անի Թերզյան, Արամ Սիրեկանյան ՀՀ-ում կոռուպտիաների և ավազակության կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական առանձնահատկությունները (հետազոտության արդյունքներ)	34

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սոսի Ալեքսանյան ԼՂՀ օմբուդսմենի տեղն ու դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում	41
--	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անի Մուրաֆյան «Նպատակի» իրավական նշանակությունը շինծու գործարքում	46
---	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts	53
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	60
--	----



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ նշանակել Արթուր Սարգսի ԴԱՎԹՅԱՆԻՆ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

15 սեպտեմբերի 2016 թվականի
քաղ. երևան
ԱԺՈ-013-Ա

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՋՐԵԼ Է ՆՈՐԱՆՇԱՆԱԿ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ**



ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն և ղեկավար կազմին՝ կոլեգիայի անդամներին, մարզերի,

կայազորների դատախազներին ու ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացրել նորանշանակ գլխավոր դատախազ **Արթուր Դավթյանին:**

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Հ. ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով՝ ո Ր Ո Ղ Ո Մ Ե Մ.

Հայկ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 12
Երևան
ՆՀ-1101-Ա



ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐՈՎ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Ա. Հարությունյանին** շնորհվել է արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

Անկախության տոնի առթիվ, իրավակարգի և օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ **Ռ. Խաչատրյանը** և Գորիսի կայազորի զինվորական դատախազ **Մ. Բաղդասարյանը** պարգևատրվել են «Մխիթար Գոշ» մեդալով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016



ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՀՐԱՄԱՆՈՎ

Հայաստանի Հանրապետության դատախազության հետ սերտ համագործակցություն ապահովելու համար և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության օրվա առթիվ, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 30-րդ հոդվածով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական **Արթուր Արմենի Մոսիյանին** պարգևատրել **հուշանվերով:**

ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆԸ

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Դավթյան Արթուր Սարգսի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ

ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Հարությունյան Արմեն Հրանտի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Ասլանյան Հայկ Զիվանի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Մելքոնյան Դավիթ Մանուկի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հարությունյան Արտավազ Հենրիկի – Հայաստանի Հանրապետության գլխավորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հարությունյան Արտակ Գագիկի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինակաչության նկատմամբ հսկողության վարչության պետ

Մուրադյան Վահագն Ժուլվերի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ

Ապերյան Միեր Երվանդի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

Բաղդասարյան Գևորգ Սուրենի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ

Ռաֆայելյան Վահե Վարուժանի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ

Պողոսյան Գրիգորի Անդրանիկի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ

Ավագյան Եղիազար Վլադիմիրի – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ

Ասլանյան Րաֆֆի Վորոնցովի – Երևան քաղաքի դատախազ



ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐԻՆ



ՀՀ Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ղեկավար Ֆիլիպ Բուայայի գլխավորած պատվիրակությանը:

Ֆ. Բուայան շնորհավորել է Ա. Դավթյանին ՀՀ գլխավոր դատախազի բարձր ու պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ: ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ղեկավարը, կարևորելով ՀՀ դատաիրավական ոլորտում իրականացվող ծրագրերը, դրանց արդյունավետության գործում ընդգծել է հատկապես դատախազության դերը:

ՀՀ գլխավոր դատախազը ողջունել է Երևանում «Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների միջազգային համաժողովի» անցկացումն ու դրան մասնակցելու նպատակով ԵԽ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ղեկավարի այցը Հայաստան: ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանը վստահեցրել է, որ դատախազությունը մշտա-

կան և գործուն ներգրավվածություն ունի ԵԽ տարբեր կառույցների կողմից ՀՀ դատաիրավական ոլորտում իրականացվող ծրագրերին, որոնք ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանն ու դրանց երաշխիքների ապահովմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ում օրենսդրական փոփոխությունների ընթացքին վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելմանը, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներին:

Ընդգծելով ՀՀ դատախազության և ԵԽ-ի միջև համագործակցության կարևորությունն ու առկա բարձր մակարդակը՝ կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել զարգացնել երկկողմ համագործակցությունը՝ ընդլայնելով աշխատանքային ոլորտներն ու ապահովելով դրանց շարունակականությունը:

ՀՀ գլխավոր դատախազը Ֆիլիպ Բուայային պարգևատրել է հուշամեդալով:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:



Ավելի քան 20 հասարակական կազմակերպությունների հետ հանդիպմանը ՀՀ գլխավոր դատախազը, կարևորելով հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության կայացման իրավական խնդիրների, քաղաքացիների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերահանման, պետական, մասնավորապես, իրավական կառույցների հետ համագործակցության ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը, նշել է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը պատրաստ է համագործակցել սոցիալական տարբեր խմբերի խնդիրների ուղղությամբ աշխատող հասարա-

կական կազմակերպությունների հետ ինչպես մասնավոր դեպքերի վերլուծության, այնպես էլ համակարգային խնդիրների լուծման հարցում:

Հանդիպմանը քննարկվել են համագործակցության սկզբունքներին առնչվող հարցեր, մասնավորապես, հասարակական կազմակերպությունների միջոցով հասարակության մասնակցության ապահովումը քրեական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման խթանումը, քրեական քաղաքականությանն առնչվող՝ հասարակության մեջ առկա խնդիրների վերհանումը, հանրային կարծիքի վերլուծումը, հասարակության տարբեր խմբերի շահերի հնարավորինս լայն ներկայացվածության ապահովումը:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել առավել արդյունավետ համագործակցության նպատակով, ինչպես վերոնշյալ հարցերի, այնպես էլ դատախազության գործունեության ոլորտներին առնչվող տարատեսակ խնդիրների, հարցերի վերաբերյալ այլընտրանքային կարծիքների, հանրային շահերից բխող առաջարկությունների քննարկման նպատակով մշակել հասարակական կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքային ձևաչափ՝ ըստ տվյալ կազմակերպության գործունեության ոլորտի:



ՀՐԱՅՐ ԹՈՎԱՍԱՅԱՆ

«ՍԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«ՎԵՏԱԿԱՆ Կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՎԱՐԴԱՆ ԴՈՂՈՍՅԱՆ

Քաղաքագիտության մագիստրոս,
ԳՄՀԸ իրավական ծրագրի
ղեկավար Հայաստանում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՄ**

Կառավարության կազմավորման հարցն այնքան կարևոր է, որ հետազոտողների մեծամասնությունը կիսանախագահական կառավարման համակարգը դասակարգում է երկու խմբի՝ ելնելով այդ հարցում պառլամենտի ազդեցության աստիճանից՝ պառլամենտա-նախագահական և նախագահական-պառլամենտական: Եթե առաջին մոդելում պառլամենտն ունի նշանակալի ազդեցություն կառավարության ձևավորման վրա, ապա երկրորդ մոդելի բնորոշ գիծը պետության գլխի գերակա դերն է այդ հարցում: Պառլամենտական-նախագահական մոդելում ամենահետևողականորեն է արտահայտված կիսանախագահական կառավարման ձևի էությունը. դուալիստական գործադիր իշխանությունում գործադիր իշխանության փաստացի ղեկավարը նա է, ով ունի խորհրդարանի մեծամասնության աջակցությունը: Որպես կիսանախագահական համակարգի բարեփոխումների հիմք՝ 2005 թվականի Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունեց հենց այս մոդելը, սակայն առաջարկված կանոնակարգումները շատ դեպքերում հետևողական չէին:

Կառավարման կիսանախագահական համակարգ ունեցող պետություններում, երբ պառլամենտը և Հանրապետության նախագահն ընտրվում են տարբեր ընտրությունների միջոցով, և երկուսն էլ օժտված են առաջնային մանդատով, հնարավոր են ուժերի հարաբերակցության հետևյալ տարբերակները՝

ա) երբ նրանց կուսակցական պատկանելությունը համապատասխանում է,

բ) երբ նրանց կուսակցական պատկանելությունը չի համապատասխանում:

Հարկ է նկատել, որ ուժերի հարաբերակցության այս վիճակը բնորոշ է պետական իշխանության կազմավորման նախագահական մոդելին ևս: Սակայն, ի տարբերություն վերջինիս՝ կառավարման կիսանախագահական համակարգ ունեցող պետությունների շարքն են դասվում միայն այն պետությունները, որտեղ նախագահը և պառլամենտն իրենց լիազորությունների սահմաններում կարող են մրցել այն հարցի շուրջ, թե ով է ձևավորելու կառավարությունը¹:

Այսպիսով՝ վերը ներկայացված առաջին տարբերակում, երբ նախագահը և խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնում են նույն քաղաքական ուժը, և նախագահն այդ մեծամասնության առաջնորդն է, կառավարության կազմավորման հարցի շուրջ մրցակցությունը ստանում է ձևական բնույթ, քանի որ նախագահը, հիմնվելով իրեն աջակցող խորհրդարանական մեծամասնության վրա, ըստ էության ինքնուրույն կազմավորում է կառավարությունը:

Կիսանախագահական կառավարման համակարգ ունեցող պետություններում հանրապետության նախագահը, որպես կանոն, օժտված է լինում այնպիսի լիազորություններով, որոնք նրան հնարավորություն են տալիս կառավարության կազմավորման հարցի շուրջ մրցակցության մեջ մտնելու խորհրդարանի հետ, դիմադրելու «կուսակցականառավարական» իշխանությանը: Հանրապետության նախագահ

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

¹ Սանրամյան տե՛ն Симоновили Лия Робертовна. Государственно-правовая модель республики со смешанной формой правления [Электронный ресурс]: Теоретический анализ: Дис. ... канд. юрид. наук: 12.00.01.– М.: РГБ, 2005, էջ 10 (Из фондов Российской Государственной библиотеки):

հի դերն այստեղ նոմինալ չէ, ինչը, որպես կանոն, բնորոշ է պառլամենտական համակարգին:

Մյուս կողմից՝ ցանկացած կանոնակարգ, որը կառավարության կազմավորման հարցում պառլամենտական մեծամասնության դերակատարությունը դարձնում է նոմինալ, կամ որտեղ պառլամենտը չի ունենում կառավարության կազմավորման հարցում հանրապետության նախագահի հետ մրցակցելու բավարար լիազորություններ, ինքնին պայմանավորում է այդ երկրի կառավարման համակարգի շեղումը դասական կիսանախագահական համակարգից: Քանի որ կիսանախագահական կառավարման ձևի չափանիշներից մեկը կառավարության պատասխանատվությունն է խորհրդարանի առջև, ուստի բնական է այն պահանջը, որ կառավարության ձևավորման հարցում խորհրդարանն ունենա ավելի զգալի լիազորություններ: Պառլամենտի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքը ենթադրում է, որ կառավարությունն ի սկզբանե պետք է վայելի պառլամենտական մեծամասնության աջակցությունը և հրաժարական տա, եթե այդ մեծամասնությունն այլևս չի աջակցում իրեն: Հակառակը կլինի անտրամաբանական՝ երբ կազմավորելիս նման աջակցության պահանջը բացակայի, սակայն կառավարությունը պատասխանատվություն կրի պառլամենտի առջև: Պառլամենտի կողմից կառավարության կազմավորմանը մասնակցելու դրույթներն ամրագրվեցին կիսանախագահական կառավարման համակարգը սահմանող հենց առաջին իսկ երկրներում: 1919թ. Վայմարյան Սահմանադրությունը և 1958թ. Ֆրանսիայի Սահմանադրությունը, որը խորհրդանշում էր անցումը Հինգերորդ հանրապետությանը, ըստ էության՝ սահմանեցին պետական իշխանության կազմակերպման նույնական մոդել: Երկու Սահմանադրությունում էլ սահմանված է, որ առնվազն ձևական առումով կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից: Ձևական առումով՝ խորհրդարանը չի մասնակցում կառավարության ձևավորմանը դրա սկզբնական փուլում, սակայն դրանից

հետո խորհրդարանը պետք է հաստատի կառավարության ծրագիրը, առանց որի վերջինս չի կարող իրականացնել իր լիազորությունները²:

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության մեջ առկա կարգավորումները հակասում էին այն մոտեցմանը, որ Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը մրցակցում են կառավարության ձևավորման հարցում, և որ Ազգային ժողովը պետք է կարևոր մասնակցություն ունենա կառավարության կազմավորմանը: 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը չէր նախատեսում Ազգային ժողովի որևէ էական մասնակցություն կառավարության կազմավորմանը և չէր ապահովում ի սկզբանե Ազգային ժողովի վստահությունը վայելող կառավարության առկայություն: Հանրապետության Նախագահն իր հայեցողությամբ նշանակում էր վարչապետին, իսկ վերջինիս առաջարկությամբ՝ նախարարներին: Նոր կազմավորված կառավարությունն իր գործունեության ծրագիրն ընդամենը պետք է ներկայացներ Ազգային ժողովին, և ծրագիրը համարվում էր հավանության արժանացած, եթե Ազգային ժողովը ծրագրի առնչությամբ կառավարությանն անվստահություն չէր հայտնում: Ըստ Սահմանադրության 74-րդ հոդվածի՝ ոչ թե կառավարությունն էր պարտավոր հայցել Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության վստահության քվեն, այլ՝ Ազգային ժողովը պետք է ապացուցեր, որ դեմ է ներկայացված ծրագրին, և կառավարությանն անվստահություն հայտնելու որոշում ընդուներ: Սահմանադրությունը չէր նախատեսում կառավարության կազմավորումից հետո պարտադիր քվեարկություն կառավարության գործունեության ծրագրի վերաբերյալ: Ազգային ժողովը կարող էր միայն, ինչպես ցանկացած այլ առիթով, անվստահություն հայտնել կառավարությանը (հոդված 74, մաս 2): Սակայն դա չէր կարող բավարար լինել Ազգային ժողովի կամքին համապատասխանող կառավարություն կազմավորելու համար, քանի որ Հանրապե-

² Տե՛ս Վայմարյան Սահմանադրության 54-րդ հոդվածը՝ Конституция Германской империи 11 августа 1919г., в кн.: “Конституции буржуазных стран”, т. 1, М., 1935, և Ֆրանսիայի Սահմանադրության 20-րդ, 49-րդ, 50-րդ հոդվածները՝ <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/texte-integral-de-la-constitution-du-4-octobre-1958-en-vigueur.5074.html>:

տության Նախագահն ուներ խորհրդարանը լուծարելու հայեցողական իրավունք (հոդված 55, կետ 3): Վարչապետին նշանակելու և ազատելու՝ Հանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունները, խորհրդարանի լուծարման նրա գրեթե անսահմանափակ իրավունքի առկայության պարագայում, ապահովում էին նրա՝ սահմանադրաիրավական առումով գերակա դիրքը կառավարության նկատմամբ³:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ սահմանադրական այս կարգավորումները գրեթե առաջին իսկ օրվանից արժանացան ոլորտի գիտնականների լուրջ քննադատությանը: Մասնավորապես՝ պրոֆեսոր Ա. Հարությունյանն իր «Նախագահի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունում այս հարցի առնչությամբ նշում է, որ առկա է երկիշխանության վտանգ, և որ Նախագահը, ունենալով բավականին լայն լիազորություններ (այդ թվում՝ նաև կառավարության ձևավորման հարցում), չի կրում որևէ պատասխանատվություն⁴:

Հանրապետության Նախագահն այս ժամանակահատվածում վարչապետի պաշտոնի համար ընտրում էր անձանց, ովքեր, որպես կանոն, պատրաստ էին դառնալու Նախագահի հանձնարարություններ կատարող և իրականության մեջ բավարարվելու այդ հարցերով «Նախագահի օգնականի» կարգավիճակով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դառնալու այն պաշտոնատար անձը, ով «ձախողումների» պատճառով լքում է իր պաշտոնը:

Այնուամենայնիվ, չնայած 1995թ. Սահմանադրության մեջ տեղ գտած վերոհիշյալ կարգավորումներին, կարելի է պնդել, որ Հանրապետության Նախագահը, իրավական առումով ունենալով բացարձակ անկախություն կառավարության կազմավորման հարցում, գործնականում քաղաքական առումով նման անկախություն չուներ: Թեև Հանրապետության Նախագահն ուներ բավականին մեծ լիազորություններ՝ ընդհուպ Ազգային ժողովն արձակե-

լու սպառնալիքի ներքո նշանակել իր համար ցանկալի վարչապետի թեկնածուին, այդուհանդերձ՝ ռեալ քաղաքականության մեջ պառլամենտական մեծամասնության լրիվ անտեսումը կարող էր Նախագահի համար նաև լուրջ բացասական քաղաքական հետևանքներ առաջացնել: Թերևս՝ հենց դրանով էր պայմանավորված, որ 1999 թվականի հունիսին վարչապետ նշանակվեց Վ. Սարգսյանը:

Կառավարման համակարգի բնութագրման համար էական է Հանրապետության Նախագահի լիազորությունների ծավալը, իսկ այդ լիազորությունների մեջ էական է ոչ միայն վարչապետին նշանակելու, այլ նաև՝ վերջինիս ազատելու լիազորությունը: Ի տարբերություն դասական կիսանախագահական համակարգ ունեցող Ֆրանսիայի, որտեղ կառավարությունը կրկնակի պատասխանատվություն չի կրում պառլամենտի և նախագահի առջև, որտեղ նախագահը չի կարող ազատել վարչապետին (նախագահը վարչապետին կարող է ազատել բացառապես վարչապետի դիմումի հիման վրա (հոդված 8))⁵, Հայաստանի Հանրապետության 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ կառավարությունը կրում էր կրկնակի պատասխանատվություն: Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն. «Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվստահություն է հայտնում կառավարությանը: Այդ իրավունքից չի կարող օգտվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում», իսկ 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը «նշանակում և ազատում է վարչապետին»⁶: Այս կանոնակարգումներն էլ ավելի էին մեծացնում վարչապետի կախվածությունը Հանրապետության Նախագահից՝ վերջինիս փաստացի դարձնելով «ավագ նախարար» գործադիր իշխանության որոշ հարցերով:

2005 թվականի Սահմանադրության փո-

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», Վ. Պողոսյան, ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք» 2010թ., էջ 609:

⁴ Տե՛ս Арутюнян А.Ш. “Институт президента Республики Армения”, Ереван, Мхитар Гош, 1996г., էջ 207:

⁵ Տե՛ս Ֆրանսիայի Սահմանադրություն, հոդված 8՝ <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/texte-integral-de-la-constitution-du-4-octobre-1958-en-vigueur.5074.html>:

⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Եր., Մխիթար Գոշ, 1997թ.:

փոփոխությունները նպատակ էին հետապնդում ունենալ հավասարակշռված կառավարման համակարգ, որի ապահովումն անհնարին էր առանց կառավարության կազմավորման և կառավարության երկակի պատասխանատվության հետ կապված իրավակարգավորումների փոփոխության: Հարկ է նաև նկատել, որ այդ փոփոխությունները 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում ամենաբարձր էին: Չնայած կոալիցիայի կողմից 2004թ. օգոստոսին ներկայացված նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի քննադատությանը⁷ 2005թ. մայիսի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը նախատեսում էր միայն, որ Հանրապետության Նախագահը վարչապետին նշանակում և ազատում է՝ «խորհրդակցելով Ազգային ժողովի խմբակցությունների հետ»: Հաշվի առնելով, որ խորհրդակցելու արդյունքով խմբակցությունների կարծիքը իրավական առումով որևէ հետևանք չէր առաջացնելու, նման փոփոխությունը պետք է համարել անէական: Եվրոպայի Խորհրդի կողմից սուր քննադատությունից⁸ և 2005թ. հունիսի 2-ին Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խմբի և Հայաստանի Հանրապետության իշխանությունների ներկայացուցիչների միջև հուշագիր ստորագրվելուց հետո⁹ 2005թ. հունիսի 20-ի աշխատանքային նախագիծն արդեն ուղղակիորեն բացառում էր կառավարության երկակի պատասխանատվությունը՝ Հանրապետության Նախագահին այլևս չունել վարչապետին ազատելու լիազորություն: Շրջադարձային փոփոխություններ այս հարցում կատար-

վեցին 2005թ. հունիսի 23-24-ին Ստրասբուրգում տեղի ունեցած քննարկումների արդյունքով, որտեղ, կառավարության կազմավորման հետ կապված, ձեռք բերվեցին հետևյալ համաձայնությունները.

Հանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում այն անձին, ով վայելում է պատգամավորների մեծամասնության վստահությունը,

Հանրապետության Նախագահը չի պահպանում վարչապետին ազատելու լիազորությունը: Դա կարող է արվել միայն Ազգային ժողովի կողմից անվստահության քվեի միջոցով:

Որպես արդյունք, 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունն իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Ի տարբերություն 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության՝ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կառավարության ծրագրի հաստատման համար արդեն պահանջվում էր քվեարկություն: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ և քվեարկության դրվում ներկայացվելուց հետո հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (հոդված 74): Եթե Ազգային ժողովը երկու ամսվա ընթացքում երկու ան-

⁷ Տե՛ս CDL-AD(2004)044:

⁸ Մայիսի 27-ին ԵԽ մամլո ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որ Վենետիկի հանձնաժողովի Հայաստանի սահմանադրական փոփոխությունների աշխատանքային խումբը խորը հիասթափություն է հայտնել առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ և ընդգծել, որ այդ նախագիծն արմատական փոփոխությունների կարիք ունի:

⁹ Փաստաթղթում Վենետիկի հանձնաժողովն արձանագրեց, որ առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը երեք հիմնական հարցերում դեռևս կարևոր թերություններ է պարունակում՝ պետական մարմինների միջև իշխանությունների հավասարակշռում, դատական մարմինների անկախություն և Երևանի քաղաքապետի նշանակման կարգ: Հուշագրում Հայաստանի Հանրապետության իշխանությունները հանձն առան այդ հարցերում նախագիծը համահունչ դարձնել Վենետիկի հանձնաժողովի պահանջներին: Ըստ հուշագրում սահմանված ժամանակացույցի՝ Հայաստանի իշխանությունները պարտավորվում էին մինչև 2005թ. հունիսի 20-ը Վենետիկի հանձնաժողովին ներկայացնել սահմանադրական փոփոխությունների նախագծի բարեփոխված տարբերակը: 2005թ. հունիսի 23-24-ին Ստրասբուրգում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության իշխանությունների և Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խմբի հանդիպումը, որի արդյունքում համաձայնություններ ձեռք բերվեցին նախագծի վիճահարույց խնդիրների լուծման սկզբունքների շուրջ: Հաստատված նոր ժամանակացույցով Հայաստանի Հանրապետության իշխանությունները պարտավորվեցին այդ սկզբունքներն իրացնել մինչև հուլիսի 7-ը: Ներկայացված նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն իր եզրակացության նախագիծը տվեց հուլիսի 21-ին՝ CDL(2005)054, որը հիմնականում դրական էր գնահատում կատարված փոփոխությունները:

գամ անընդմեջ հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա, Սահմանադրության 74.1-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը պարտավոր է արձակել Ազգային ժողովը¹⁰:

Պետք է նկատել, որ կառավարության կազմավորման սահմանված կարգը, ընդհանուր առմամբ, տեղավորվում է կիսանախագահական կառավարման ձևի տրամաբանության մեջ: Ի տարբերություն նախորդ կարգավորումների՝ այս դեպքում կառավարության կազմավորմանը մասնակցում են ինչպես Հանրապետության Նախագահը, այնպես էլ Ազգային ժողովը, սակայն այդ մասնակցության աստիճանը և կշիռը պետք է դիտարկել տարբերակված ձևով: Ինչպես վարչապետի, այնպես էլ նախարարների նշանակման լիազորությունն իրավաբանորեն պատկանում է բացառապես Հանրապետության Նախագահին, սակայն նա այդ նշանակումները կատարելիս, ի տարբերություն նախորդ կարգավորումների, կաշկանդված է ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական նախապայմաններով: Վարչապետին ընտրելիս, նա կաշկանդված է Ազգային ժողովում ուժերի հարաբերակցությամբ: Այս պարագայում ևս չի կարելի բացառել նաև այն տարբերակը, որ Հանրապետության Նախագահը հաշվի չնստի պառլամենտական մեծամասնության հետ և վարչապետ նշանակի իր համար ընդունելի թեկնածուին: Սակայն Հանրապետության Նախագահի նման վարքագիծն իր մեջ հակասահմանադրականության տարրեր կպարունակի: Վարչապետին նշանակելիս նա թե՛ իրավաբանորեն և թե՛ քաղաքական առումով պարտավոր է հաշվի նստել Ազգային ժողովում քաղաքական ուժերի դասավորության հետ և վարչապետ նշանակել Ազգային ժողովի մեծամասնության վստահությունը վայելող անձին, ում գլխավորած կառավարությունը հետագայում ի վիճակի պետք է լինի ստանալու և պահպանելու Ազգային ժողովի վստահությունը:

2005 թվականի սահմանադրական փո-

փոխությունների արդյունքով Հանրապետության Նախագահը զրկվեց վարչապետին ազատելու հայեցողական լիազորությունից, ինչի շնորհիվ վերացվեց կառավարության երկակի պատասխանատվությունը Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի առջև: Կառավարությունը պատասխանատու է միայն Ազգային ժողովի առջև, և որևէ պարագայում Հանրապետության Նախագահը չի կարող պաշտոնանկ անել նրան: Հանրապետության Նախագահը միայն կարող է վարչապետին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնել, իսկ որոշում ընդունելու բացառիկ իրավասությունը պատկանում է Ազգային ժողովին (հոդված 84¹¹): Քանի որ Հանրապետության Նախագահը չունի որևէ ազդեցության լծակ Ազգային ժողովի նկատմամբ, ուստի 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունն ապահովում է կառավարության պատասխանատվությունը բացառապես Ազգային ժողովի առջև:

Անդրադառնալով 2005 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխություններին՝ պրոֆեսոր Զազնաևը նշում է. «Մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները Հայաստանը Նախագահի գերիշխանությամբ, հավասարակշռված նախագահական համակարգ էր: Մասնավորապես՝ պետության ղեկավարն ինքնուրույն էր նշանակում և ազատում վարչապետին, ում կառավարությունը պետք է ունենար Ազգային ժողովի վստահությունը:

Սահմանադրական բարեփոխումների շնորհիվ՝ Հայաստանը մոտեցավ կիսանախագահական ձևի ֆրանսիական մոդելին»¹²:

2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունն իրականում Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը մոտեցրեց ֆրանսիականին, սակայն չնույնականացվեց, ֆրանսիական մոդելը դասական պառլամենտական-նախագահական մոդել չէ: Պարզ չէ նաև պրոֆեսորի օգտագործած «հավասարակշռված» հասկացությունը, քանի որ ակնհայտ

¹⁰ Տե՛ս ՀՀՊՏ 12.05.2005 (Հատուկ թողարկում):

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս Зазнаев Олег Иванович. Полупрезидентская система: политико-правовой анализ. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Государственное образовательное учреждение высшего профессионального образования “Казанский государственный университет им. В.И. Ульянова-Ленина”, էջ 70:

էր անհավասարակշռությունը հոգուտ Հանրապետության Նախագահի:

Այս փոփոխություններով առկա բոլոր խնդիրները չլուծվեցին: Սահմանելով վարչապետի նշանակման չափանիշը (պատգամավորների կողմից վստահությունը վարչապետի թեկնածուի նկատմամբ) և կարևորություն տալով Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխվածությանը՝ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, բացառությամբ Ազգային ժողովի խմբակցությունների հետ խորհրդակցություններ անցկացնելու պահանջից (55-րդ հոդված, 4-րդ կետ), չսահմանեց որևէ այլ ընթացակարգ, որով Հանրապետության Նախագահը պետք է որոշեր, թե ով է վայելում պատգամավորների մեծամասնության վստահությունը: Ակնհայտ է, որ եթե խորհրդակցությունների արդյունքով այս կամ այն խմբակցությունը կամ խմբակցությունների միավորումը Հանրապետության Նախագահին ներկայացնում է բավարար փաստեր, որ իրենց թեկնածուն ունի պատգամավորների բացարձակ կամ հարաբերական մեծամասնության աջակցությունը, ապա Հանրապետության Նախագահը սկզբունքորեն կաշկանդված է նման առաջարկով: Խնդիրը, սակայն, հենց այն է, թե ինչպես որոշել նման մեծամասնության առկայությունը. ելնել միայն տվյալ խմբակցության կամ համաձայնությունների եկած խմբակցությունների մեխանիկական մեծությունից բավարար չէ, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ խմբակցության ոչ բոլոր անդամներն են պատրաստ աջակցելու վարչապետի տվյալ թեկնածուին (իսկ բոլոր պատգամավորների հետ առանձին քննարկելու ինստիտուտ նախատեսված չէր, քանի որ դա կդառնար արդեն քվեարկություն կամ, դիցուք, սոցիոլոգիական հարցում): Նման դեպքեր, որպես կանոն, կարող են ավելի հաճախ լինել հատկապես այն պարագայում, երբ կառավարությունը կազմավորվում է ոչ թե Ազգային ժողովի ընտրություններից անմիջապես հետո, այլ՝ Ազգային ժողովի գումարման ընթացքում, երբ խմբակցության քաղաքական միասնությունը և կարգապահությունը, որպես կանոն, ավելի թույլ են:

Այսպիսով՝ բոլոր այն պարագաներում, երբ Ազգային ժողովում կա հստակ մեծամաս-

նություն վարչապետի թեկնածուի շուրջ, Հանրապետության Նախագահը հայեցողություն չունի: Նման պարագայում Հանրապետության Նախագահը սկզբունքորեն պարտավոր է վարչապետ նշանակել մեծամասնության աջակցությունը վայելող թեկնածուին, եթե չկան իրավական հիմքեր առաջարկված թեկնածությունը մերժելու համար: Եթե Ազգային ժողովը տրոհված է, և չկան հստակ մեծամասնություններ, ապա Հանրապետության Նախագահը կարող է օգտագործել իր քաղաքական ազդեցությունը վարչապետի ընտրության հարցում:

Երկրորդ. ինչպես 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը, այնպես էլ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը չնախատեսեցին վարչապետի թեկնածության առաջադրում պատգամավորների կողմից, ինչը ոչ միայն կհստակեցներ վարչապետի նշանակման մեխանիզմը և վարչապետի նշանակումը կդարձներ առավել տրամաբանական, այլև կառավարման համակարգը կամ առնվազն վարչապետի նշանակումը՝ պակաս կոնֆլիկտաձին: Նման փոփոխությունը Հանրապետության Նախագահին չէր տա հայեցողության լայն սահմաններ հատկապես այն պարագայում, երբ Ազգային ժողովում չկա բացարձակ մեծամասնություն, իսկ Ազգային ժողովին էլ չէր դնի երկրնտրանքի առջև՝ հավանություն տալու իր համար ոչ այնքան ընդունելի կառավարությանը կամ գնալ նոր ընտրության: Կառավարության և Ազգային ժողովի իրավասությունների հավասարակշռման անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար կլիներ կառավարության կազմավորման այնպիսի ընթացակարգը, որը հնարավորություն կտար ժողովրդի կողմից ուղղակիորեն ընտրված երկու մարմնին՝ Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին, հերթականությամբ առաջարկելու վարչապետի թեկնածու: Եթե կառավարության կազմավորման վերջին փուլում անհնար լինի ձևավորել Ազգային ժողովի հարաբերական մեծամասնության վստահությունը վայելող կառավարություն, ապա ճգնաժամից դուրս գալու միակ միջոցն Ազգային ժողովի լուծարումն է և նոր ընտրությունների նշանակումը: Կառավարության կազմավորման այս մոտեցումն ընդուն-

ված է Լեհաստանի Սահմանադրությունում (154 և 155 հոդվածներ)¹³:

Երրորդ. երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում նախատեսված Ազգային ժողովի լուծարումը խնդիրը չի լուծում: Առաջին հայացքից կարող է ստեղծվել տպավորություն, թե Ազգային ժողովի մեծամասնությունն այլընտրանք չունի՝ կամ պետք է հանդուրժի իրեն ոչ հաճո վարչապետի գոյությունը, կամ պետք է գնա լուծարման: Սակայն, եթե Ազգային ժողովը նաև երկրորդ անգամ համաձայն չէ կառավարության ծրագրին, ապա կարող է լուծարումից խուսափելու համար հավանություն տալ կառավարության ծրագրին, սակայն մի փոքր անց նրան անվստահություն հայտնել: Քանի որ կառավարության անվստահություն հայտնելու Ազգային ժողովի իրավունքը բացարձակ է (բացառությամբ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ), և դրա համար Ազգային ժողովը չի կարող լուծարվել, ուստի այդ դեպքում անհրաժեշտ կլինի նորից սկսել կառավարության ձևավորման գործընթացը:

Հարկ է նկատել, որ Ազգային ժողովների լուծարումները կառավարման համակարգում դիտարկվում են որպես փակուղային իրավիճակներից դուրս գալու, կոնֆլիկտները լուծելու միջոց: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսված մեխանիզմները դրանցից ոչ մեկն են, ոչ մյուսը: Նոր ընտրությունների ընթացքում նորից կարող է նույն մեծամասնությունը կազմավորվել, որի հետ կրկին անգամ Հանրապետության Նախագահը հաշվի չնստի վարչապետ նշանակելիս:

Չորրորդ. 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները չնախատեսեցին այսպես կոչված «փոքրամասնության» կառավարության գոյությունը, երբ կառավարությունը վայելում է խորհրդարանի միայն հարաբերական, այլ ոչ թե բացարձակ մեծամասնության աջակցությունը:

Հինգերորդ. չնայած Վենետիկի հանձնա-

ժողովի դրական վերաբերմունքին՝ նախագիծն այդպես էլ չամրագրեց, այսպես կոչված, «կոնստրուկտիվ անվստահության» մեխանիզմը, որը կառավարության կայունության ապահովման եղանակներից մեկն է, հատկապես՝ «փոքրամասնության կառավարության» դեպքում: Կոնստրուկտիվ անվստահության մեխանիզմի իմաստն այն է, որ միայն նեգատիվ մեծամասնությանը թույլ չտրվի տապալել կառավարությունը: Եթե այդ նեգատիվ մեծամասնությունը միաժամանակ պատրաստ կամ ունակ չէ ընտրելու նոր վարչապետ կամ կառավարություն, ապա գործող կառավարությունը շարունակում է պաշտոնավարել:

Վեցերորդ. 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները հստակ չպատասխանեցին այն հարցին, թե որքանով է Հանրապետության Նախագահը կաշկանդված նախարարների նշանակման և ազատման վերաբերյալ վարչապետի առաջարկություններով: Չնայած՝ գործնականում այս խնդիրը Հայաստանի քաղաքական համակարգում 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության գործողության ընթացքում չի ծագել, քանի որ Հանրապետության Նախագահը միշտ վայելել է պառլամենտական մեծամասնության անվերապահ աջակցությունը, այդուհանդերձ՝ չէր կարելի բացառել նախարարների նշանակման կամ ազատման հարցում կոնֆլիկտային իրավիճակների առաջացումը, երբ Հանրապետության Նախագահը և վարչապետը պատկանեին տարբեր քաղաքական ճամբարների:

Այսպիսով՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, ըստ էության, կիսալուծումներ էին, որոնք բավարար չէին կառավարության ձևավորման հարցում Հանրապետության Նախագահի գերակա դիրքը փոքրինչ մեղմելու համար: Հետագա տարիները ևս հաստատեցին, որ քաղաքական կյանքում 2005 թվականի սահմանադրական փոփոխություններն էական, նկատելի որևէ փոփոխություն չեն բերում:

¹³ Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/poland/poland-r.htm: Նման առաջարկություն արվել է նաև հեղինակների կողմից, տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, Վ. Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ, Երևան, 2005թ., հոդվածներ 129-131, էջեր 54-56:

ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱԼ

Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության ազգային փորձագետ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ, ՀՀ կառավարման ակադեմիայի և Արդարադատության ակադեմիայի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, արդարադատության առաջին դասի խորհրդակալ

ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության կարգավիճակն ամրագրող նորմերը սահմանված էին «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխում (հոդված 103-րդ): Ուստի իրավական հարթության վրա չէին դադարում գիտատեսական վեճերը դատախազության իրավական կարգավիճակի վերաբերյալ, մասնավորապես՝ դատական իշխանության մասը կազմելու համատեքստում:

Հիրավի, պետք է նկատել, որ դատախազությունն իր կարգավիճակով, կազմակերպման և գործունեության առանձնահատկություններով, իրեն ներհատուկ գործառույթներով չէր կարող ներառվել դատական իշխանության մեջ կամ լինել դատական ինստիտուտներից մեկը: Եվ թեպետ դատախազության կազմակերպումն ու գործունեությունը կարգավորող 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 103-րդ հոդվածը ներառված էր «Դատական իշխանություն» գլխում, սակայն այդ կարգավորումը չէր արտացոլում պետական իշխանության մարմինների համակարգում Հայաստանի Հանրապետության դատախազության տեղն ու դերը, և առավել ևս, հաշվի առնելով 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 91-րդ հոդվածի կարգավորումն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները, ապա, անշուշտ, դատախազությունը չէր կարող հանդիսանալ դատական իշխանության մաս՝ նույնիսկ «Դատական իշխանություն» գլխում ամրագրված լինելու դեպքում: Այնուհանդերձ՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունն այն երկրներից է, որտեղ դատախազությունն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ: Ավելին՝ 2015 թվականի

փոփոխություններով Սահմանադրությամբ հստակորեն տարանջատվեցին և առանձին գլուխներում իրենց ամրագրումը ստացան դատական իշխանության և դատախազության՝ որպես պետական միասնական համակարգի վերաբերյալ դրույթները:

Ողջունելի է նաև այն, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում ամրագրվեցին 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության վերաբերյալ ամրագրված նորմերից տարբերվող նոր իրավակարգավորումներ, սակայն, այնուհանդերձ՝ դատախազության գործունեության վերաբերյալ նորմերն ամբողջական, համալիր կարգավորում չստացան 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում, որոնց առավել մանրամասն կանդիդատներն ք սահմանադրաիրավական յուրաքանչյուր իրավակարգավորման իրացման ուղենիշների ներկայացման համատեքստում: Այսպես՝

1. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Ընդ որում՝ հաղորդումը քննարկվում է Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 103.1-ին հոդվածով սահմանված կարգով:

Հարկ է նկատել, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում Գլխավոր դատախազի կողմից նման հաղորդման ներկայացման պարտավորություն

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

չսահմանվեց: Մինչդեռ նման պարտավորություն ամրագրվեց սահմանադրաիրավական կարգավիճակ ունեցող այլ մարմինների համար. այսպես, ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, 194-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին, կամ 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ, 200-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության վերաբերյալ:

Նշված նորմերի համադրումից հետևում է, որ Գլխավոր դատախազի դեպքում նույնպես պետք է սահմանադրական կարգավորմամբ նախատեսվեր տարեկան հաղորդման ներկայացում, և նման իրավակարգավորմամբ օրենսդրորեն հնարավորություն կընձեռվեր Ազգային ժողովին՝ քննարկելու իրավասություն վերապահելու համար: Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ: Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Եթե Ազգային ժողովին վերապահվի կամ պահպանվի ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումը քննարկելու իրավասությունը, ապա, սահմանադրական այլ նորմերի համադրման տեսանկյունից՝ սահմանադրականության առումով կարող է առաջանալ իրավական գնահատականի խնդիր:

Միևնույն ժամանակ՝ Վենետիկի հանձնաժողովն իր՝ «Դատախազների վերաբերյալ Վենե-

տիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների ժողովածուի» (2015 թվականի հունիսի 5) 3.2.1 և 3.2.2 կետերում՝ նշում է, որ Դատախազության անկախությունը չի արգելում Պառլամենտ տարեկան հաղորդում ներկայացնելը դատախազության գործունեության վերաբերյալ, սակայն ընդհանուր դրույթներով՝ առանց անդրադառնալու անհատական գործերին: Փաստաթղթում ընդգծվում է, որ դատախազները չպետք է պարտականություն ունենան ներկայացուցչական մարմին զեկույցելու անհատական գործերի մանրամասները, քանի որ խորհրդարանին հաշվետու լինելը կարող է անուղակի ազդեցություն ունենալ դատախազի վրա և հանգեցնել նրա կողմից օրենսդրի համար ոչ ցանկալի որոշումներ ընդունելուց ձեռնպահ մնալուն կամ օրենսդրին ցանկալի որոշումներ ընդունելուն:

Իսկ մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրության և սահմանադրական նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալը՝ 1) որոշ երկրներում, որոնց Սահմանադրությամբ ամրագրված են դատախազության վերաբերյալ դրույթներ, այսինքն՝ դատախազությունն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ, բոլոր դեպքերում **Գլխավոր դատախազի կողմից հաղորդում ներկայացնելու նշված պարտականությունն՝ ամրագրված է Սահմանադրություններում**, օրինակ՝ նման կարգավորումներ կան սահմանված Սերբիայի, Հունգարիայի Սահմանադրություններում և այլն, 2) երկրների մեկ այլ խմբի դատախազության մասին օրենսդրական ակտերում սահմանված է հաղորդում ներկայացնելու պարտականությունը, սակայն վերջիններիս սահմանադրական նորմերում դատախազության վերաբերյալ ընդհանուր որևէ դրույթ չի պարունակվում, օրինակ՝ Էստոնիայում, Ավստրալիայում և այլուր, 3) մեկ այլ խումբ երկրներում, օրինակ՝ Մոնտենեգրոյի դատախազության մասին համապատասխան օրենքում, Մոլդովայի «Դատախազության մասին» նոր օրենքի նախագծում սահմանված է Գլխավոր դատախազի կողմից հաղորդում ներկայացնելու պարտականությունը, չնայած այս երկրներում դատախազությունն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ, և այդ պարտականությունը

¹ EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) DRAFT COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING PROSECUTORS, Strasbourg, 5 June 2015 CDL(2015)027*

սահմանված չէ նշված երկրների Սահմանադրություններում: Նման կարգավորում սահմանված էր նաև 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Սակայն հարկ է ընդգծել, որ նշված երկրների Սահմանադրություններում, ինչպես նաև 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության՝ սահմանադրական վերը նշված նոր նորմերում սահմանված այլ մարմինների հաղորդումների ներկայացման համանման իրավակարգավորումներ նախատեսված չեն, 4) երկրների մեկ այլ խմբի և՛ սահմանադրությամբ, և՛ օրենսդրությամբ հաղորդում ներկայացնելու պարտականություն ընդհանրապես սահմանված չէ, օրինակ՝ Լատվիայում:

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքով, առաջարկում եմ՝

1) նախատեսել հաղորդում ներկայացնելու պարտականություն հանրությանն իրազեկելու համատեքստում: Մասնավորապես՝ դատախազության մասին օրենքով ամրագրել, որ Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը տեղադրվում է դատախազության կայքէջում, կամ.

2) նախատեսել այդպիսի պարտականություն՝ ներկայացնելու պարտավորությունն ամրագրելով միայն Ազգային ժողով ներկայացնելու համար, սակայն **առանց Ազգային ժողովում համապատասխան քննարկում կազմակերպելու**: Միայն Ազգային ժողով ներկայացնելու պարտականության առաջարկությունը համահունչ է Սահմանադրության 177-րդ հոդվածի իրավակարգավորումներին առ այն, որ, ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 103-րդ հոդվածի, երբ Գլխավոր դատախազին ներկայացնում է Հանրապետության նախագահը, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի համաձայն՝ այդ իրավա-

սությունը վերապահվել է Ազգային ժողովի մշտական իրավասու հանձնաժողովին:

Առաջարկվող իրավակարգավորումը, բացի վերոշարադրյալից, այդ թվում՝ ԱԺ լիազորությունների իրավակարգավորումների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներից, հիմնավորվում է նաև հետևյալ հանգամանքով քանի որ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման շուրջ անցկացվող քննարկումներն իրենց հիմքում պետք է ունենան կոնկրետ քրեական գործերով նախնական քննության և օրենքով պաշտպանվող այլ տեղեկությունների ու տվյալների պահպանման իրավաչափ նպատակ, իսկ առանձին քրեական գործերի քննության ընթացքի կամ առանձին դրվագների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազից պարզաբանումներ պահանջելը կարող է դառնալ քաղաքական կուսակցությունների կամ առանձին պատգամավորների կողմից քաղաքական շահարկման առարկա, և դրանով իսկ խորհրդարանն անուղղակի ազդեցություն կարող է ունենալ Գլխավոր դատախազի վրա, ինչը նաև հակասում է Վենետիկի հանձնաժողովի վերը նշված դիրքորոշմանը, ուստի քննարկումների անցկացումը, կարծում եմք, իրավաչափ չէ նաև այս համատեքստում:

2. Դատախազության վերաբերյալ սահմանադրական բարեփոխումների համատեքստում պետք է առանձնացնել նաև գլխավոր դատախազի տեղակալների նշանակման կարգի փոփոխությունը: 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահը Գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին: Իսկ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը չի կարգավորում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների նշանակման կարգը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ այն երկրներում, որոնց Սահմանադրությունների համաձայն՝ Գլխավոր դատախազը նշանակվում է Պառլամենտի կողմից² գլխավոր դատախազի տեղակալները՝ 1) նշանակվում կամ ընտրվում են, ինչպես նաև

² Օրինակ՝ Խորվաթիայում, Սերբիայում՝ կառավարության առաջարկությամբ և պառլամենտի իրավասու հանձնաժողովի համաձայնությամբ, Մոլդովայում՝ խորհրդարանի նախագահի առաջարկությամբ, Մակեդոնիայում՝ կառավարության, Հունգարիայում՝ նախագահի առաջարկությամբ:

ազատվում են Դատախազության խորհրդի կողմից (Խորվաթիա³, Մակեդոնիա, Մոնտենեգրո), 2) նշանակվում և ազատվում են խորհրդարանի կողմից՝ դատախազության խորհրդի առաջարկությամբ (Սերբիա), 3) նշանակվում և ազատվում են Գլխավոր դատախազի կողմից անմիջականորեն կամ դատախազության խորհրդի համաձայնությամբ (Հունգարիա, Վրաստան, Մոլդովա՝ բարձրագույն խորհրդի համաձայնությամբ):

Վենետիկի հանձնաժողովի վերը նշված փաստաթղթի 3.1.2.-րդ կետում առաջարկվում է, որ վերադաս դատախազների նշանակումն ու ազատումն իրականացվի դատախազական խորհուրդների կողմից կամ նրանց «ակտիվ» մասնակցությամբ, օրինակ՝ *վերադաս դատախազներին կարող է նշանակել գլխավոր դատախազը, իսկ դատախազական խորհուրդն իրավունք ունի մերժելու գլխավոր դատախազի այդ որոշումը, եթե առկա են հիմնավոր պատճառներ*: Հանձնաժողովը ողջունում է այն կարգավորումը, որի համաձայն՝ վերադաս դատախազները նշանակվում են դատախազական խորհուրդների կամ կոլեգիաների կողմից: Ավելին՝ հանձնաժողովը ողջունում է այն հանգամանքը, որ դատախազական խորհուրդներում ընդգրկվեն որակավորված մասնագետներ: Այսպիսի խորհուրդներ կան մի շարք երկրներում՝ Լեհաստան, Սլովենիա, Իսպանիա, Հունգարիա, Վրաստան, Մոլդովա, Խորվաթիա, Մակեդոնիա, Մոնտենեգրո, Սերբիա և այլն: Նշված երկրներում, խորհուրդների հետ միաժամանակ գործում են նաև կոլեգիաներ կամ ժողովներ⁴: Այսպես, օրինակ՝ Մոլդովայում Բարձրագույն խորհուրդը բաղկացած է 12 անդամից, որի կազմում են Գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը և մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի նախագահը, 3 անդամ նշանակվում է պառլամենտի կողմից, 6 անդամ՝ դատախազության կոլեգիայի կողմից, որից 2-ը՝ կենտրոնական մարմնից, իսկ 4-ը՝ մարզերից և համայնքներից: Խորհրդի նախագահն ընտրվում է դատախազ անդամներից: Բարձրագույն խորհուրդն ունի 3 հանձնա-

ժողով՝ կարգապահական, խրախուսման և որակավորման: Իսկ Սերբիայում դատախազության պետական խորհրդի կարգավիճակը և խորհրդի լիազորությունները սահմանված են «Դատախազության պետական խորհրդի մասին» առանձին օրենքով: Դատախազության պետական խորհուրդը 11 անդամից է բաղկացած՝ գլխավոր դատախազ, արդարադատության նախարար, Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովի նախագահ, Ազգային ժողովի կողմից ընտրվող՝ 6 դատախազներ ու իրավաբան-գիտնականներ կամ 15 տարվա ստաժ ունեցող իրավաբաններ: Խորհրդի նախագահը գլխավոր դատախազն է, իսկ փոխնախագահն ընտրվում է դատախազ անդամներից:

Հարկ է նշել, որ նշված Բարձրագույն խորհուրդները ունեն լայն լիազորություններ, մասնավորապես՝ ներկայացնել գլխավոր դատախազի թեկնածուներ, նշանակել գլխավոր դատախազի ժամանակավոր պաշտոնակատար, ներկայացնել Ազգային ժողովին տեղակալների թեկնածուներ, ընդունել էթիկայի կանոնագիրքը, առաջարկել վերապատրաստման ծրագրեր, մասնագիտական պատրաստման ծրագրեր, նշանակել և ազատել կարգապահական հանձնաժողովի անդամներին, տալ եզրակացություններ, կարծիքներ դատախազության վերաբերյալ օրենքների նախագծերի վերաբերյալ, բյուջետային միջոցների տնօրինման վերաբերյալ և այլն: Այսինքն՝ նշված խորհուրդներին է վերապահված դատախազության գործունեության հիմնարար հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու լիազորությունները, իսկ կոլեգիաները հրավիրվում և անցկացվում են քրեական քաղաքականության մշակման ուղղությունների, դատախազության գործունեության կազմակերպարարական հարցերի քննարկման, ինչպես նաև որոշակի կամ կոնկրետ քրեական վարույթների քննարկման համար:

Վերը նշվածի համատեքստում գլխավոր դատախազների նշանակման սահմանադրական նորմերին համահունչ իրավակարգավորում է՝

1) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ-

³ Խորվաթիայում դատախազության խորհրդի անդամները ևս ընտրվում են պառլամենտի կողմից:

⁴ Կոլեգիան բաղկացած է լինում բոլոր վերադաս դատախազներից (Մոլդովա, Սերբիա), մասնավորապես՝ Գլխավոր դատախազը, տեղակալները, ստորաբաժանման ղեկավարները, տարածքները ղեկավարող դատախազները:

ների նշանակումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազության կոլեգիայի համաձայնությամբ: Միևնույն ժամանակ, քանի որ դատախազության կոլեգիայի անդամները, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, նշանակվում են ՀՀ գլխավոր դատախազի կողմից, իսկ դատախազության համակարգում Գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ, ուստի կոլեգիայի համաձայնությունը ունենալու է զուտ ձևական բնույթ:

2) ՀՀ գլխավոր դատախազին տեղակալի թեկնածություն առաջադրելու իրավունքը վերապահել որակավորման հանձնաժողովին՝ օրենքով որակավորման հանձնաժողովի կազմի և անդամների քանակի վերանայման համատեքստում: Վերը նշվածի համատեքստում, կարծում եմ, վերջինս առավել իրավաչափ կարգավորում է: Այս գործընթացը կարող է իրականացվել, ինչպես մի շարք եվրոպական երկրներում է իրականացվում, մրցույթի հայտարարման միջոցով՝ համապատասխան թեկնածուների հայտերի ներկայացմամբ, և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին ընտրել մրցույթի արդյունքներով՝ որակավորման անդամների կեսից ավելի ծայրերով ընդունված որոշմամբ: Հավասար ծայրեր ստացած թեկնածուների դեպքում որոշումը կարող է կայացնել ՀՀ գլխավոր դատախազը կամ հայտարարել նոր մրցույթ:

3. Սահմանադրական փոփոխությունների արդյունքով՝ ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների պաշտոնի նշանակմանը ներկայացվող պահանջների իրավակարգավորման հարցը նույնպես պետք է ստանա համապատասխան իրավական լուծում: Մասնավորապես՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Գլխավոր դատախազին պաշտոնի նշանակման համար պահանջներ չէին սահմանվում: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նման պահանջներ սահմանված են միայն Գլխավոր դատախազի տեղակալների համար: Այսպես՝ Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, ով ունի դատավորի, դատախազի, փաստաբանի, քննիչի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում

իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ կամ իրավաբանի մասնագիտությամբ այլ աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ:

Իսկ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել նաև լրացուցիչ պահանջներ:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ դատախազ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալվրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, և տիրապետում է գրական հայերենին:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունում պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը՝ 1) ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, 2) ով դատապարտվել է հանցագործության համար՝ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից անկախ, 3) ով ունի դատախազի պաշտոնում նշանակումը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, 4) ով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն՝ բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով, 5) ում նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով:

Կարծում եմ՝ օրենքի վերը նշված հոդվածներում սահմանված պահանջները կարելի է դիտարկել որպես լրացուցիչ պահանջներ և հստակ սահմանել, որ դրանք տարածվում են նաև Գլխավոր դատախազի և նրա տեղակալների վրա:

Ընդ որում՝ քանի որ ՀՀ գլխավոր դատախազի համար սահմանված է միայն ՀՀ քաղաքացի լինելու պահանջ, ուրեմն՝ ՀՀ գլխավոր դատախազը չի կարող լինել ՀՀ և այլ պետության քաղաքացի: Կարծում եմ, որ նման պահանջ պետք է տարածել նաև բոլոր դատախազների վրա, այնպես, ինչպես դատավորների համար սահմանադրորեն նախատեսված է միայն ՀՀ քաղաքացի լինելու պահանջը, քանի որ դա բխում է նրանց զբաղեցրած պաշտոնից, մասնավորապես՝ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքների տիրապետում և այլն:

Հարկ է անդրադառնալ նաև ՀՀ գլխավոր դատախազի համար սահմանված «մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ» սահմանադրական պահանջը օրենքով ընդլայնելու հարցին՝ լրացուցիչ պահանջներ սահմանելու սահմանադրական նորմի համատեքստում:

Մի շարք երկրներում վերը նշված հիմնահարցը ստացել է հետևյալ կարգավորումը. օրինակ՝ Մոլդովայի դատախազության մասին օրենքի 2015 թվականի նախագծի 19-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի պաշտոն կարող է զբաղեցնել այն անձը, ով ունի իրավունքի բնագավառում մասնագիտական աշխատանքի 10 տարվա ստաժ, որից 5-ը՝ դատախազի պաշտոնում: Իսկ 20-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, ով ունի 7 տարվա դատախազի ստաժ, որից վերջին 3 տարին զբաղեցրել է դատախազի պաշտոն և ունի կառավարման հմտություններ: Մինչդեռ Մոլդովայի գործող օրենքի համաձայն՝ գլխավոր դատախազի համար պահանջվում է 15 տարվա ստաժ՝ դատախազության մարմիններում, իսկ նրա տեղակալի համար 10 տարվա ստաժ՝ դատախազության մարմիններում: Լիտվայի դատախազության մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազ կամ նրա տեղակալ կարող է լինել այն անձը, ում 35

տարին լրացել է, ունի բարձր բարոյական հատկանիշներ, գերազանց տիրապետում է լիտվերենին, Լիտվայի քաղաքացի է, ունի իրավաբանի մագիստրոսական աստիճան կամ դրան համապատասխանող իրավաբանի որակավորում, ունի վերջին 10 տարում դատախազի կամ դատավորի ստաժ կամ վերջին տասը տարում համալսարանի պրոֆեսոր է և ունի իրավական գիտությունների կամ սոցիալական գիտությունների դոկտորի աստիճան: Լատվիայի դատախազության մասին օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի պաշտոն կարող է զբաղեցնել այն անձը, ով ունի առնվազն 3 տարվա Սահմանադրական դատարանի դատավորի ստաժ, կամ առնվազն 5 տարվա դատախազի ստաժ, կամ առնվազն 3 տարվա գերագույն դատարանի դատավորի կամ շրջանային դատարանի դատավորի ստաժ՝ համապատասխան որակավորման դաս: Սերբիայի դատախազության մասին օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով դատախազների համար սահմանված ընդհանուր պահանջներից բացի՝ սահմանվում է Գլխավոր դատախազի և նրա տեղակալի համար համապատասխանաբար 12 տարվա և 11 տարվա իրավաբանական ստաժ և դատախազ նշանակվելու համար համապատասխան քննության հանձնում: Մոնտենեգրոյի դատախազության մասին օրենքի 24-25-րդ հոդվածների համաձայն՝ գլխավոր դատախազը և նրա տեղակալը պետք է ունենան 15 տարվա իրավաբանական աշխատանքի ստաժ և հանձնեն դատախազ նշանակվելու համար սահմանված քննությունը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ **Գլխավոր դատախազի և նրա տեղակալների համար, այնուհանդերձ, սահմանվում է դատավորի կամ դատախազի պաշտոնում 3-10 տարվա ստաժ:** Կարծում եմ՝ դատախազությունը ղեկավարող անձը, այնուհանդերձ, պետք է ունենա որոշակի աշխատանքային փորձ դատախազության համակարգում՝ աշխատանքային համապատասխան հմտությունների, գործնական ունակությունների և մասնագիտական որակների տիրապետման համար: Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավա-

կան ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհուրդը⁵ «մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ» սահմանադրական պահանջը օրենքով ընդլայնելը համարեց Սահմանադրական կարգավորումներից չբխող, որպիսին դիրքորոշում նշված խորհուրդը ներկայացրել էր նաև դատավորների համար՝ Դատական նոր օրենսգրքի իրավակարգավորումների քննարկման համատեքստում:

Ինչ վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ նրան ներկայացվող պահանջները պետք է փոփոխել՝ հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազի համար սահմանադրորեն ներկայացվող պահանջները:

Ամփոփելով վերոշարադրյալը և համադրելով Գլխավոր դատախազին ներկայացվող պահանջների հետ՝ գլխավոր դատախազի տեղակալների համար, կարծում եմ, կարելի է սահմանել հետևյալ պահանջները: Այսպես՝ Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել քսանութ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով օժտված այն անձը, ով ունի՝ 1) մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն կամ՝ 2) դատավորի, դատախազի, քննիչի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

4. Սահմանադրական բարեփոխումների համատեքստում նոր իրավակարգավորման պետք է ենթարկել նաև ՀՀ գլխավոր դատախազի ազատման կարգը և հիմքերը:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի լիազորությունները համարվում են դադարած, երբ՝ 1) լրացել է նրա պաշտոնավարման ժամկետը, 2) պաշտոնից ազատվելու դիմում է ներկայացրել Հանրապետության Նա-

խագահին, 3) դադարեցվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

Պաշտոնավարման ժամկետի ընթացքում գլխավոր դատախազի լիազորությունները կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝ 1) նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պարտականությունների կատարումը, 2) իր պարտականությունները չի կատարում պատշաճ, 3) դրսևորել է դատախազության հեղինակությունը վարկաբեկող կամ ոչ վայել վարքագիծ, 4) առկա են լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ: Նման հիմքերի առկայության դեպքում Հանրապետության Նախագահն իրավունք ունի գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու առաջարկությամբ դիմելու Ազգային ժողով:

Կարծում եմ՝ պետք է տարանջատել վաղաժամկետ դադարեցման իմպերատիվ հիմքերը և այն հիմքերը, երբ Ազգային ժողովն իրավունք ունի պաշտոնանկ անելու Գլխավոր դատախազին: Մասնավորապես՝ **հրաժարականի դիմում ներկայացնելը պետք է սահմանել որպես իմպերատիվ հիմք, քանի որ Գլխավոր դատախազի պաշտոնը պետության քրեական քաղաքականության համար պատասխանատու պաշտոն է, և Ազգային ժողովը կարող է չընդունել կոնկրետ ժամանակահատվածում կամ կոնկրետ պահին Գլխավոր դատախազի հրաժարականը: Հարկ է ընդգծել նաև, որ Գլխավոր դատախազին վաղաժամկետ պաշտոնանկ անելու հիմքերի առկայության դեպքում համապատասխան առաջարկություն Ազգային ժողովին ներկայացնելու իրավունքը պետք է վերապահել Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին՝ վերջինիս առաջարկությամբ, կամ ուղղակիորեն պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Նշված կարգը պետք է ամրագրել «Ազգային ժողովի կանոնակարգի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում:**

Միևնույն ժամանակ՝ Վենետիկի հանձնաժողովը համարում է, որ Գլխավոր դատախազին պաշտոնից ազատելիս նրան պետք է օժտել խորհրդարանի առջև արդար լսումների անց-

⁵ ՀՀ նախագահի 2016թ. փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագիր:

կացման իրավունքով (լավելու իրավունք): Ուստի կարելի է քննարկել նաև նման իրավունքի վերապահման հարցը: Այսպես՝ առաջարկում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Գլխավոր դատախազի լիազորությունները համարվում են դադարած, երբ լրացել է նրա պաշտոնավարման ժամկետը՝ պաշտոնի ստանձմանը հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

2. Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

1) դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրան անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը.

4) Գլխավոր դատախազի մահը.

5) սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալը:

3. Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝

1) հրաժարականի դիմում է ներկայացրել Ազգային ժողով.

2) հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պարտականությունների կատարումը.

3) իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կամ պարբերաբար խախտել է օրենքը.

4) կատարել է «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ հանգեցրել դատախազին ոչ վայել վարքագծի դրսևորման.

5) առկա են իր լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում Ազգային ժողովի նախագահը համապատասխան տեղեկությունը ստանալու

պահից պաշտոնական հաղորդագրություն է տարածում Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին»:

5. Գլխավոր դատախազի համար իրավական պաշտպանության որոշակի երաշխիքներ, այնուհանդերձ, սահմանադրական բարեփոխումների արդյունքով չամրագրվեցին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-5-րդ մասերի համաձայն՝ դատախազին չի թույլատրվում բերման ենթարկել առանց գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալների համաձայնության, բացառությամբ դատական ակտի հիման վրա բերման ենթարկելու դեպքերի: Դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում է գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալները:

Վերը նշված իրավակարգավորումներից հետո բաց է մնում այն հարցը, թե ո՞վ է քրեական հետապնդում հարուցելու Գլխավոր դատախազի նկատմամբ, կամ Գլխավոր դատախազին բերման ենթարկելու հնարավորություն սահմանվելու է, թե՞ ոչ, քանզի վերը նշված իրավակարգավորումներից բխում է, որ Գլխավոր դատախազը բերման չի ենթարկվում, կամ նրա նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվում, քանի որ սահմանված չեն համապատասխան իրավակարգավորումներ: Անձեռնմխելիության հետ որոշակի աղերսներ ունեցող այս դրույթների իրավակարգավորումները, այնուհանդերձ, անհրաժեշտ են և, կարծում են՝ դրանք իրենց կարգավորումը պետք է ստանային ՀՀ բարեփոխված Սահմանադրությունում:

Վենետիկի հանձնաժողովը վերը նշված փաստաթղթի 3.3.1.-րդ կետում⁶ նշում է, որ անձեռնմխելիությունը չպետք է անսահմանափակ լինի, մասնավորապես՝ գլխավոր դատախազը և մյուս դատախազների օգտվելը պատ-

⁶ EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) DRAFT COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING PROSECUTORS, Strasbourg, 5 June 2015 CDL(2015)027*, EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) REPORT ON EUROPEAN STANDARDS AS REGARDS THE INDEPENDENCE OF THE JUDICIAL SYSTEM: PART II – THE PROSECUTION SERVICE Adopted by the Venice Commission at its 85th plenary session (Venice, 17-18 December 2010):

գամավորին հավասար անձեռնմխելիությունից ծայրահեղություն է: Միննույն ժամանակ, սակայն, նշում է, որ ցանկալի է պաշտպանել դատախազին այլ մարմինների կողմից իր հանդեպ կամայական կամ խախտումներով իրականացվող գործընթացներից, օրինակ՝ ոստիկանության կամայական միջամտությունից: **Նախընտրելի է, որ դատախազի նկատմամբ քրեական գործ կամ հետապնդում հարուցելու իրավասության նկատմամբ սահմանափակումը ենթակա լինի դատական հսկողության: Իր պարտականությունների կատարման ընթացքում հանցագործություն կատարելու կամ իր կարգավիճակին անհամապատասխան վարքագիծ դրսևորելու դեպքերում դատախազի նկատմամբ հարուցված քրեական գործով նախնական քննությունը կարող է իրականացնել ավելի բարձր պաշտոն զբաղեցնող դատախազը: Փաստաթղթում քննադատվում է այն նորմը, որի համաձայն՝ դատախազին չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ հարցաքննել, ինչպես նաև նրա բնակարանները չի կարելի խուզարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հայտնա-**

բերվում է հանցանքի կատարման վայրում: Առաջարկվում է բացառությունը տարածել բոլոր այն դեպքերում, երբ կա նման գործողություն իրականացնելու դատական ակտ: Այսինքն՝ Վենետիկի հանձնաժողովը, չնայած չի ընդունում պարզավորական անձեռնմխելիությամբ նաև Գլխավոր դատախազին օժտելը, սակայն դրա հետք աղերս ունեցող որոշ փարբեր պարունակող դրոյթների սահմանումը, այնուամենայնիվ, ողջունվում է:

Միջազգային փորձի տեսանկյունից, թերևս, պետք է արձանագրել, որ կան երկրներ, որոնց Սահմանադրություններում դեռ ամրագրված են Գլխավոր դատախազի համար անձեռնմխելիության նորմեր, օրինակ՝ Սերբիայի Սահմանադրության 162 հոդվածը⁷, Մոնտենեգրոյի Սահմանադրության 137-րդ հոդվածը⁸, Ղազախստանի Սահմանադրության 83 հոդվածը⁹ և այլն: Մի շարք երկրներում Գլխավոր դատախազի համար անձեռնմխելիության նորմեր սահմանվում են դատախազության մասին համապատասխան օրենքով, օրինակ՝ Լատվիայում¹⁰, Հունգարիայում¹¹, Լիտվայում¹², Մակեդոնիայում¹³ և այլուր:

⁷ Article 162 – Immunity

A Public Prosecutor and Deputy Public Prosecutor may not be held responsible for the expressed opinion while performing the function of prosecutors, except in cases when a Public Prosecutor or Deputy Public Prosecutor commits a criminal offence by violating the law.

A Public Prosecutor or a Deputy Public Prosecutor may not be detained or arrested in the legal proceedings instituted due to a criminal offence committed in performing the prosecutor’s function or service without the approval of the authorised committee of the National Assembly.

⁸ Article 137: Functional immunity

State Prosecutor and Deputy State Prosecutor shall enjoy functional immunity and shall not be held responsible for the expressed opinion or decision made in the performance of the duties thereof, unless this represents a criminal offense.

⁹ Генеральный Прокурор Республики в течение срока своих полномочий не может быть арестован, подвергнут приводу, мерам административного взыскания, налагаемым в судебном порядке, привлечен к уголовной ответственности без согласия Сената, кроме случаев задержания на месте преступления или совершения тяжких преступлений.

¹⁰ Section 7. Immunity of a Prosecutor

(1) Initiation of a criminal prosecution against a prosecutor, as well as his or her detention, arrest, forcible conveyance and subjection to a search shall be carried out in accordance with the procedures prescribed by law, notifying without delay the Prosecutor General thereof.

(2) A prosecutor may not be detained pursuant to administrative procedures. A prosecutor shall be disciplinarily punishable for administrative violations committed.

(3) The control of information systems and means of communication, also, electronic means, used in the operations of the Office of the Prosecutor, the retrieval of information from such and interference with their operation shall be allowed only with the consent of the Prosecutor General.

¹¹ Section 3. Like Members of Parliament, the Prosecutor General and prosecutors shall be accorded immunity. **Այս նորմը Վենետիկի հանձնաժողովը բնութագրել է որպես ծայրահեղություն:**

¹² Article 12. Immunity of Prosecutors

1. Investigation in relation to a criminal act committed by the Prosecutor General may be initiated only by the President of the Republic, upon removing him from office with the consent of the Seimas.

¹³ Article 48. The Public Prosecutor and the Deputy Public Prosecutor shall enjoy immunity. The immunity of the Public Prosecutor and the Deputy Public Prosecutor shall mean they may not be held liable or detained for their actions, opinions or decisions made while performing their duties. The Public Prosecutor and the Deputy Public Prosecutor may

Հիմք ընդունելով վերը նշվածը, այնուհանդերձ, կարծում ենք, որ Գլխավոր դատախազի համար անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել իրավական պաշտպանության որոշակի երաշխիքներ:

6. Դատախազության վերաբերյալ սահմանադրական նոր փոփոխությունների համատեքստում փոփոխության պետք է ենթարկել նաև դատախազության պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը, ինչպես նաև մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության լիազորությունը: Այսպես՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: Իսկ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Վերը նշված նորմերի համադրումից բխում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նշված լիազորության իրականացման համար սահմանվել է «**բացառիկ դեպքերում**» եզրույթը: Նշված լիազորության իրականացման կարգը սահմանվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով: Հարկ է ընդգծել, որ այս հոդվածում արդեն իսկ սահմանված է հետևյալ ձևակերպումը՝ «Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է **միայն, եթե...**», իսկ «միայն եթե» եզրույթն արդեն իսկ նշանակում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: Այսինքն՝ գործող խմբագրությամբ ամրագրված են արդեն իսկ սահմանափակ հիմքեր, երբ դատախազությունը հարուցում է պետական շահերի պաշտպանու-

թյան հայց: Կարծում են՝ գործող կարգավորումների առավել սահմանափակումը կվտանգի դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության լիազորության պատշաճ իրականացման ընթացքը, ինչը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ պետական շահերի և պետության վրա: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ քրեական ոլորտից դուրս դատախազության պարտականությունների, գործառույթների վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված նորմեր և կանոններ չկան, այդ գործառույթները պայմանավորված են ներպետական իրավական և պատմական ավանդույթներով:

Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի կողմից 2008 թվականի հոկտեմբերի 21-ին «Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս» վերտառությամբ թիվ 3 կարծիքում ԵԽ նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» թիվ (2000)19 հանձնարարականը, 2012 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունված թիվ 11 «Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս» հանձնարարականում թեև չեն սահմանվում դատախազության համար կոնկրետ լիազորություններ քրեաիրավական ոլորտից դուրս և, իրավական համակարգերի տարբերություններից կախված, անդամ պետություններում այդ լիազորությունները կարող են տարբեր լինել, սակայն սահմանում են այդ լիազորությունների իրականացման համար մի շարք ուղղորդող սկզբունքներ՝ քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտներում:

Հարկ է նկատել, որ Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի վերը նշված կարծիքում նշված է, որ կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որոշ պետություններում դատախազները գործառույթներ ունեն քրեական իրավունքի ոլորտից դուրս՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական իրավունքի ոլորտներում, ինչպես նաև շրջակա

not be detained without the approval of the Parliament of Republic of Macedonia unless they are caught while perpetrating a criminal act for which a sentence of imprisonment of at least five years is provisioned. The procedure for deciding on the matter of immunity of the Public Prosecutor and the Deputy Public Prosecutor shall be urgent and shall be conducted following a previously obtained opinion from the Council.

միջավայրի, սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի, ինչպիսիք են անչափահասները, սահմանափակ կարողությամբ անձինք, շատ քիչ եկամուտ ունեցող անձինք, իրավունքների պաշտպանության ոլորտում: Որոշ անդամ պետություններում դատախազությունների խնդիրները և աշխատանքի ծավալն այս ոլորտում կարող է գերազանցել քրեական արդարադատության ոլորտում դատախազների դերը:¹⁴ Դատախազների՝ քրեական ոլորտից դուրս իրականացվող գործառույթների հիմնական նպատակները հետևյալներն են. օրենքի գերակայության (օրինականության, օրենքին ենթարկվելու, օրենքի խախտման դեպքում միջոցի տրամադրման) երաշխավորում, անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն (առավելապես՝ իրենց իրավունքները պաշտպանելու ունակություն չունեցողների համար՝ անչափահասները, բնակության վայր չունեցողները, մտավոր ունակությունների հետ խնդիրներ ունեցողները), պետական շահերի և գույքի պաշտպանություն, հանրային շահի կամ հանրային կարգի պաշտպանություն:¹⁵

Վերը նշված մոտեցումներն ամրագրված են նաև ԵԽ նախարարների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունված թիվ 11 հանձնարարականում և դրա բացատրական հուշագրում: Այնուհանդերձ՝ քրեական ոլորտից դուրս դատախազության պարտականությունների, գործառույթների վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված նորմեր և կանոններ չկան, այդ գործառույթները պայմանավորված են ներպետական իրավական և պատմական ավանդույթներով:

Մի շարք երկրների փորձը, մասնավորապես՝ Բելգիա, Չեխիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունգարիա, Իռլանդիա, Էստոնիա, Դանիա, Ֆինլանդիա, Վրաստան, Շվեդիա, Շվեյցարիա, Միացյալ Թագավորություն և այլն, ցույց է տալիս, որ դատախազությունը քրեական ոլորտից դուրս օժտված է տարբեր լիազորություններով, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին. դատախազը կարող է հարուցել վարույթ՝ ամուսնությունը, անչափահասների

որդեգրումը անվավեր ճանաչելու, մահացած երեխայի անունից հայրությունը չեղյալ ճանաչելու համար (եթե անձը մահացած երեխայի հայրը չէ), ծնողական իրավունքից զրկելու համար, ալիմենտի և երեխայի խնամքի հարցերով, ինչպես նաև իր նպատակները չիրականացնելու կամ օրենքի փոփոխության հիմքով՝ հիմնադրամը լուծարելու համար, հանրային հիմնադրամների ստեղծման օրինականությունն ապահովելու համար, կազմակերպության գրանցումը չեղյալ ճանաչելու համար, ցանկացած պայմանագրի պայմանի վիճարկման կամ պայմանագիրն առոչինչ ճանաչելու համար, եթե այդ պայմանագիրը վնասում է հանրային շահին, քաղաքացիության փաստերը դատարանում վիճարկելու համար, շրջակա միջավայրին, կենդանիների վնաս հասցնելու համար, ապրանքային նշանի գրանցման և գրանցումը չեղյալ հայտարարելու համար, արտոնագրի տրամադրման կամ վերացման մասին որոշումը փոխելու համար, եթե դրանք առևտրային նպատակով շահագործելը հակասում է հանրային կարգին, և այլն:

Վերը նշված բոլոր լիազորությունները սահմանված են, օրինակ՝ Հունգարիայի օրենսդրությամբ: Իռլանդիայում հանրահավաքների և ընտրությունների արդյունքների վավերականությունը նույնպես կարող է վիճարկվել, իսկ Բուլղարիայի Քաղաքացիության մասին օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազն իրավունք ունի դիմելու հպատակեցումը չեղյալ ճանաչելու կամ Բուլղարիայի քաղաքացիությունը դադարեցնելու միջնորդությամբ և այլն:

Ինչպես տեսնում ենք՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածի նորմերի իրավակարգավորումները և դրանց կիրառման պրակտիկական ցույց են տալիս, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատախազության պետական շահերի պաշտպանության ոլորտի լիազորությունը, ինչպես արդեն նշեցինք, օրենքով արդեն իսկ սահմանափակվել է բացառապես հայց հարուցելու «հիմքերի առկայության» հանգամանքով, ինչի պատճառով

¹⁴ Տես՝ Opinion No 3(2008) Consultative Council of European Prosecutors: “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” կետ 16:

¹⁵ Տես՝ նույն տեղում, կետ 25:

ՀՀ դատախազությունն իր սահմանադրական լիազորությունն առավելապես իրականացնում է պետական շահերի խախտման մասին համապատասխան տեղեկատվության «առկայության» դեպքում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ. 1) գործող օրենքում սահմանված իրավակարգավորումներն ինքնին համարել բացառիկ դեպքեր՝ նկատի ունենալով, որ արդեն իսկ սահմանված հիմքերը սահմանափակ են, սակայն բացառել այն դեպքերը, երբ դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ կարող է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, այլ այն դեպքում, երբ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո: Դրանով իսկ կապահովվի, որպեսզի իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը առավել պատասխանատու լինի պետական շահերի պաշտպանություն իրականացնելիս՝ չակնկալելով, որ իր «փոխարեն» դա կանի դատախազը, 2) «պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը» պետք է ընդգրկի միայն՝ «քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի, վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի, քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցերը», այլ նաև՝ «համայնքի շահերի պաշտպանության հայցի հարուցումը»: Հարկ է ընդգծել, որ սահմանադրական նորմերին համահունչ է այս կարգավորումը, քանի որ Սահմանադրական նորմը կիրառում է «պետական շահ» եզրույթը, որի հասկացությունը բացահայտվում է օրենքով և ամենևին չի ընդգրկում միայն պետության շահը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Իսկ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում մինչդատական

քրեական վարույթի օրինականության նկատմամբ: Նշված լիազորության իրականացման կարգը սահմանվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերում սահմանված է «հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ» եզրույթը, առաջարկվում է օրենքում հղում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, առանց դատավարական նշանակություն ունեցող իրավակարգավորումները սահմանելու և դրանով իսկ բացառելով կրկնությունները տարբեր իրավական ակտերում: Մինչույն ժամանակ՝ անցումային դրույթներում պետք է սահմանել, որ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության իրականացման կարգի վրա մինչև նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը տարածվում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները:

7. Հաշվի առնելով սահմանադրական փոփոխությունները, կարծում եմ՝ անհրաժեշտ է կատարել նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի մի շարք այլ դրույթների փոփոխություններ: Մասնավորապես՝ 1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածում սահմանված՝ **արհեստակցական միությանն անդամակցելու իրավունքի սահմանափակումը պետք է հանել**, քանի որ, եթե 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ 28-րդ հոդվածի համաձայն՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքը կարող է սահմանափակվել դատախազության մարմինների ծառայողների համար, ապա 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածն ըստ անձանց կարգավիճակի ուղղակիորեն նման սահմանափակում չի նախատեսում: Ընդ որում՝ նման դիրքորոշումը բխում է նաև մի-

ջազգային փաստաթղթերից¹⁶, 2) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածում սահմանված է, որ դատախազի պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է դատախազության կոլեգիայի նիստում հանդիսավոր պայմաններում տրված երդմամբ: Առաջարկվում է առաջին անգամ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնն զբաղեցնող անձի համար ևս սահմանել երդման արարողություն Ազգային ժողովում: Այս կարգը սահմանելով Ազգային ժողովի կանոնակարգում՝ 3) անհրաժեշտ է նաև փոփոխել դատախազության էթիկայի հանձնաժողովում ՀՀ նախագահի կողմից նշանակվող անդամների նշանակման կարգը՝ ՀՀ նախագահի՝ սահմանադրական նոր կարգավիճակի ամրագրման համատեքստում: Վերջինիս փոխարեն՝ անդամները, ովքեր պետք է լինեն իրավաբան-գիտնականներ, կարող են նշանակվել ՀՀ Գլխավոր դատախազի կողմից, ինչպես նաև օրենքի ուժով այդ հանձնաժողովի անդամ կարելի է ներառել նաև Արդարադատության ակադեմիայի ղեկավորին, 4) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածների դրույթներին: Մասնավորապես՝ անհրաժեշտ է սահմանել, որ Գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցով «Սահմանադրական

դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դիմում է Սահմանադրական դատարան և մասնակցում գործի քննությանը: Հարկ եմ համարում նշել, որ եթե նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով Սահմանադրական դատարան դիմելիս Գլխավոր դատախազը կարող է գործի քննությանը մասնակցելու համար նշանակել ներկայացուցիչ, ապա նման իրավունք չպետք է սահմանել նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցով է դիմում Սահմանադրական դատարան՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակը: Այսպիսով՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում ամրագրվեցին 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության վերաբերյալ ամրագրված նորմերից տարբերվող նոր իրավակարգավորումներ, որոնք իրավական հիմք դարձան «Դատախազության մասին» ՀՀ օրենքի դրույթների սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքով ամրագրված նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու համար: Ընդ որում՝ նշված գործընթացը պետք է իրականացվի այն ժամկետի հաշվառմամբ, որպեսզի նոր իրավակարգավորումներն ուժի մեջ մտնեն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 210-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում, այսինքն՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:



● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

¹⁶ Guidelines on the Role of Prosecutors, Adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990/, 8 and 9:

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱԼ

Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՂԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրները: ՀՀ-ում ներկայումս գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ, որտեղ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ, կրթական և իրավապահ գործառույթների իրականացումը բաշխված է պետական իշխանության տարբեր մարմինների միջև: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ գործառույթների իրականացումը վերապահված է քննչական և դատախազական մարմիններին, իսկ կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացումը վերապահված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող փորձագիտական հանձնախմբին և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացումը կապված է դեռևս 2004 թվականի հունիսի 1-ի ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի հետ¹: Նշված խորհուրդի գործունեությունը դադարեց 2015 թվականի մարտի 3-ին, երբ ուժը կորցրած ճանաչվեց «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» Նախագահի հրամանագիրը²: 2015 թվականի փետրվարի 19-ին ընդունվեց «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» 19 փետրվարի 2015 թվականի N 165-Ն որոշում, հասանելի էր՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96013>

ծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 165-Ն որոշումը, որով ձևավորվեց կոռուպցիայի դեմ պայքարի նոր խորհուրդ (այսուհետև՝ Խորհուրդ): Վերլուծելով Խորհրդի ձևավորման կարգը, կառուցվածքը և գործառույթները՝ կարող ենք նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործող խորհուրդին բնութագրում են հետևյալ հատկանիշները՝

ա) *ինստիտուցիոնալ և գործառույթային անկախության բացակայություն*. Խնդիրն այն է, որ Խորհրդի կազմում հիմնականում ընդգրկված են պետական իշխանության տարբեր մարմիններ, հետևաբար՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը պետական իշխանության մյուս մարմիններից չունի ինստիտուցիոնալ և գործառույթային անկախության բավարար երաշխիքներ, քանի որ Խորհրդի անդամները հիմնականում ներկայացնում են պետական իշխանության տարբեր մարմիններ և իրենց գործառույթների իրականացման ընթացքում ուղղակիորեն և անուղղակիորեն կաշկանդված են գերատեսչական շահերով:

բ) *Խորհրդի գործունեության իրավական հիմքն ունի ենթաօրենսդրական բնույթ*. Խորհրդի գործունեության իրավական հիմքը կազմում է ՀՀ կառավարության 2015թ. N 165-Ն որոշումը:

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին», ընդունվել է 10.06.2004 թվականի, ուժը կորցրած է ճանաչվել 19.03.2015 թվականին, հասանելի էր՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=30815>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարություն «ՀՀ կառավարության որոշումը կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» 19 փետրվարի 2015 թվականի N 165-Ն որոշում, հասանելի էր՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96013>

րոշումը, ինչը չի կարող բավարար իրավական երաշխիքներ ստեղծել Խորհրդի գործունեության կայունության և արդյունավետության ապահովման տեսանկյունից:

գ) *Խորհրդի աշխատանքի ոչ մշտական բնույթը*. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կամ Խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ իրականացնող հաջորդ մարմինը *Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն է*: Պետք է նշենք, որ Հանձնաժողովը նույնպես ունի որոշակի խնդիրներ իր գործառույթների արդյունավետ իրականացման հարցում, մասնավորապես՝ Հանձնաժողովը չունի գործառույթային և ինստիտուցիոնալ անկախության բավարար երաշխիքներ, միաժամանակ չունի բավարար ռեսուրսներ, այդ թվում՝ ինքնուրույն ֆինանսական միջոցներ և աշխատակազմ իրեն օրենքով վերապահված գործառույթների իրականացման համար:

2. *Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մոդելները և միջազգային իրավական ակտերը կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ*: Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ներկայումս միասնական մոտեցումներ չկան, տարբեր պետությունները ստեղծել են կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր կառուցակարգային մեխանիզմներ: Այդ մեխանիզմների համեմատական ուսումնասիրության արդյունքով առանձնացվում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական մոդելներ՝ ունիվերսալ, իրավապահ և կանխարգելիչ:

Կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելի դեպքում գործում է բազմաֆունկցիոնալ հակակոռուպցիոն մարմին, որն իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական գործառույթները՝ կրթական, կանխարգելիչ և քննչական: Կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդել է գործում հետևյալ պետություններում՝ Հոնգ Կոնգում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով), Սինգապուրում (Կոռուպցիոն գործունեության քննության բյուրո), Լիտվայում (Հատուկ քննչական

ծառայություն), Լատվիայում (Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրո), Ուելսում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով), Բոթսվանում (Կոռուպցիոն գործերով և տնտեսական հանցագործությունների վարչություն), Ուգանդայում, Ավստրալիայում, Կորեայում, Թաիլանդում, Արգենտինայում, Էկվադորում նույնպես գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելը:

Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ մոդելն *իրավապահ մոդելն է*, որը տեսականորեն համարվում է կոռուպցիայի դեմ պայքարի ամենարդյունավետ մոդելը, քանի որ այս մոդելի դեպքում չկա կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ մասնագիտացած մարմին ինչը, ենթադրում է պետության վարչական և ֆինանսական միջոցների խնայում: Իրավապահ մոդելի դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի կրթական, կանխարգելիչ և քննչական գործառույթներն իրականացվում են տարբեր իրավապահ մարմինների կողմից: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդելը հատուկ է հետևյալ պետություններին՝ Նորվեգիա (Տնտեսական և շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների հետաքննության և քրեական հետապնդման նորվեգական ազգային վարչություն), Բելգիա (Կոռուպցիայի դեմ պայքարի կենտրոնական մարմին), Իսպանիա (Կոռուպցիայի հետ կապված տնտեսական հանցագործությունների քննության հատուկ, դատախազական ծառայություն), Խորվաթիա (Կոռուպցիայի կանխարգելման և կազմակերպված հանցավորության վարչություն), Ռումինիա (Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային վարչություն), Հունգարիա (Հետաքննությունների ազգային բյուրո), Գերմանիա (Ներքին գործերի դեպարտամենտ) և Մեծ Բրիտանիա (Ոստիկանության կոռուպցիայի դեմ պայքարի ջոկատ):

Կոռուպցիայի դեմ պայքարի երրորդ մոդելը *կանխարգելիչ մոդելն է*, որը դրսևորվում է երկու ձևով՝ *կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդների և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակային կանխարգելիչ մարմինների*: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդները հիմնականում կազմված են պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացու-

ցիչներից, այս մարմինները մշտական գործող չեն և աշխատում են հանդիպումների միջոցով: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդների մոդելը ներկայումս գործում է ՀՀ-ում: Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդելի երկրորդ տեսակը կոռուպցիայի դեմ պայքարի նպատակային կանխարգելիչ մարմիններն են, որոնք գործում են մշտական հիմունքներով և իրականացնում են կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ ու կրթական գործառույթներ, այս մոդելը հատուկ է Ուկրաինային, Սլովենիային, Սերբիային և այլն³:

1990-ական թվականներից սկսած՝ կոռուպցիայի դեմ պայքարը դարձել է միջազգային հանրության մտահոգության հիմնական խնդիրներից մեկը: Վերջին տասնամյակի ընթացքում ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, «Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպության» կողմից ընդունվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաներ (hard law) և կոռուպցիայի դեմ պայքարի տարատեսակ առաջարկություններ, բանաձևեր, ուղեցույցներ, հայտարարություններ (soft law), որոնց հիմնական նպատակն է պետություններում ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործող ինստիտուցիոնալ համակարգ:

Միջազգային իրավական ակտերն ամրագրել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ հետևյալ հիմնարար դրույթները.

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»⁴ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են հակակոռուպցիոն քաղաքականության

իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնումը և փարատումը»:

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան կոռուպցիայի դեմ պայքարի մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված: Պետք է փորձառդրվեն անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառույթների իրականացման համար»:

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 36-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթներն առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցներն իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով»:

³ St' u Specialised anti-corruption institutions review of models anti-corruption network for Eastern Europe and Central Asia, OECD 2008, հասանելի էր՝ <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf>, տես նաև For more information on Serbia, Macedonia and Slovenia see Clean Hands website maintained by the BETA News Agency, Serbia, and dealing with corruption in Serbia and Montenegro and its neighbors հասանելի էր՝ <http://www.beta.co.yu/korupcija/eng/>

⁴ St' u Հայաստանը ՄԱԿ-ի՝ «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» ստորագրել է 2005թ., վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հոկտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 2006թ. նոյեմբերի 11-ին

«Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի»⁵ 20-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտական կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ անկախություն՝ այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնելու արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերն իրենց գործունեության համար ունենան բավարար պարտաստիչություն և ֆինանսական միջոցներ»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Կոռուպցիայի դեմ պայքարի քսան հիմնական սկզբունքներ»⁶ մասին բանաձևի 3-րդ սկզբունքի համաձայն՝

«Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, քննության, քրեական հետապնդման համար պարասխանապու մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելիս լինեն անկախ և ինքնուրույն, երաշխավորված լինեն ոչ իրավաչափ ազդեցությունից և ունենան ապացույցների հավաքման, կոռուպցիայի դեմ պայքարում աջակցություն ցուցաբերած անձանց պաշտպանության և քննության գաղտնիության ապահովման արդյունավետ միջոցներ»:

Ընդհանուր առմամբ՝ պետք է նշենք, որ միջազգային իրավական ակտերը կոռուպցիայի դեմ պայքարի որևէ մոդելի նախապատվություն չեն տալիս, և յուրաքանչյուր պետություն ազատ է կոռուպցիայի դեմ պայքարի մոդելի ընտրության հարցում: Սակայն կոռուպցիայի դեմ պայքարի մի շարք միջազգային իրավական ակտեր ամրագրել են որոշակի չափանիշներ,

որոնք պետք է բնութագրեն պետությունում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը, մասնավորապես՝ յուրաքանչյուր պետություն պետք է իր իրավական համակարգին համապատասխան ունենա անկախ, մասնագիտացված կոռուպցիայի դեմ պայքարի մարմին, որին պետք է բնութագրեն հետևյալ հատկանիշները՝

- կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացում, որը ենթադրում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի հիմնական գործառույթը պետք է լինի հակակոռուպցիոն մասնագիտական գործառույթների իրականացումը,
- պետական իշխանության մարմիններից պետք է ունենա ինստիտուցիոնալ անկախություն, որը ենթադրում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը չպետք է գտնվի պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կազմում կամ պետական իշխանության որևէ մարմնի ուղղակի կամ անուղղակի ազդեցության տակ,⁷
- գործունեության իրավական հիմքը պետք է լինի օրենսդրական, այսինքն՝ պետք է գործի օրենքի հիման վրա,⁸
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի գործունեությունը պետք է հիմնվի թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների վրա,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը պետք է գործի մշտական հիմունքներով՝ ամենօրյա աշխատանքային ռեժիմով,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը պետք է ունենա անհրաժեշտ ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսներ և աշխատակազմ,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի ընկալարի և աշխատողների ընտրություն

⁵ Տե՛ս Կոնվենցիան ստորագրվել է 1999թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում, <<-ի կողմից վավերացվել է 01.05 2006թ:

⁶ Տե՛ս Resolution (97) 24, adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 November 1997.

⁷ Տե՛ս Esser, Albin & Kubiciel Michael (2004), Institutions against Corruption: A Comparative Study of the National Anti-corruption Strategies reflected by GRECO's First Evaluation Round, Study commissioned by Council of Europe, GRECO, Strasbourg.

⁸ Տե՛ս Opinion on two draft anti-corruption laws of Ukraine, p. 7 <http://www.legislationline.org/documents/id/19137>

նը կամ նշանակումը պետք է տեղի ունենան օբյեկտիվ և թափանցիկ ընթացակարգով:⁹

3. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ: Յուրաքանչյուր պետությունում կոռուպցիայի դեմ պայքարի մոդելի ընտրությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է պետությունում գործող կոռուպցիայի դեմ պայքարի գործող ինստիտուցիոնալ համակարգի ամբողջական վերլուծություն: Միաժամանակ՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում զարգացած մեխանիզմներ ունեցող պետությունների փորձի օգտագործումը պետք է համահունչ լինի տվյալ պետության իրավական համակարգին, իրավական և քաղաքական մշակույթին և սոցիալ-տնտեսական վիճակին: Ակնհայտ է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելը, որն արդյունավետ կերպով գործում է Հոնգ Կոնգում, Սինգապուրում, Լիտվայում, կարող է կիրառելի չլինել բոլոր պետությունների համար: Կարծում ենք, որ յուրաքանչյուր պետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդել ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնի հետևյալ հանգամանքները՝

ա) պետության իրավական և քաղաքական համակարգին բնորոշ առանձնահատկությունները,

բ) պետությունում առկա կոռուպցիայի մակարդակը, դրա նվազման և ընդլայնման միտումը,

գ) պետության սոցիալ-տնտեսական վիճակը:¹⁰

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրները լուծելու նպատակով, հիմք ընդունելով կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ միջազ-

գային իրավական ակտերը, առաջարկում ենք դիտարկել հետևյալ տարբերակը:

Նախ և առաջ՝ անհրաժեշտ է ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենք, որի հիման վրա անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին: Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմնի գործունեության համար բավարար իրավական երաշխիքներ ստեղծելու նպատակով՝ անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում լրացում կատարելը և Սահմանադրությունում նախատեսել «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմին» անվանմամբ նոր գլուխ (հիմք ընդունելով 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասը¹¹):

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մարմնի ստեղծման դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացած մարմինն իրականացնելու է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և դրան կից գործող փորձագիտական հանձնախմբի գործառույթները, հետևաբար՝ նպատակահարմար չէ միևնույն ժամանակ նույն գործառույթներն իրականացնող երկու մարմնի առկայությունը, ելնելով նշվածից՝ անհրաժեշտ ենք համարում ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշումը, որով կազարեցվի կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և փորձագիտական հանձնախմբի գործունեությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացած մարմինն իրականացնելու է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթները, հետևաբար՝ անհրաժեշտ է դադարեցնել նաև Բարձրաստի-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

⁹ Տե՛ս UNDP (2005), Report of the Regional Forum on Anti-corruption Institutions, Vienna International Center, հասանելի էր՝ <http://europeandcis.undp.org/files/uploads/Lotta/AC%20Forum%20Report.pdf>

¹⁰ Տե՛ս Camerer, Lala (2001), Prerequisites for effective anti-corruption ombudsman's offices and anti-corruption agencies, 10th International Anti-Corruption Conference, Prague, IACC, Transparency International հասանելի էր՝ <http://www.10iacc.org/download/workshops/cs06.pdf>

¹¹ Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մաս՝ «Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի»:

ճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեությունը և ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլուխը, որը սահմանում է «Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովների կազմավորումը և գործունեության կարգը»:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունավետության բարձրացման նպատակով նույնպես անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ում գործող բոլոր քննչական մարմիններն էլ քննում են կոռուպցիոն բնույթի հանցագործություններ¹²: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք դիտարկել ՀՀ-ում կոռուպցիոն բնույթի հանցագործություններ քննող միասնական քննչական մարմին ստեղծելու հնարավորությունը: ՀՀ-ում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության միասնական քննչական մարմնի ստեղծումը, կարծում ենք, հնարավոր է իրականացնել հետևյալ տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության Հատուկ քննչական ծառայությանը վերապահել բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության իրավասությունը, ինչի շնորհիվ՝ դա կդառնա կո-

ռուպցիոն բնույթի հանցագործություններ քննող մասնագիտացված մարմին:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին ստեղծելու դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրականացվող աշխատանքները կստանան առավել համակարգված և շարունակական բնույթ¹³, բացի այդ՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետական իշխանության մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը կբարձրանա¹⁴, ինչն էլ, իր հերթին, կնպաստի պետությունում առկա կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրները ներկայումս խոչընդոտում են կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը: Առկա խնդիրների լուծման նպատակով, հաշվի առնելով միջազգային իրավական ակտերի պահանջները, անհրաժեշտ ենք համարում ՀՀ-ում ձևավորել և զարգացնել կոռուպցիայի դեմ պայքարի նոր ինստիտուցիոնալ համակարգ, որը ենթադրում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի օրենսդրական իրավական կարգավորում, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում մասնագիտացված կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի ստեղծում:



¹² Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2013թ. մարտի 19-ի թիվ 12 փոփոխված հրամանով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ցանկում ընդգրկվել է 31 հանցատեսակ:
¹³ Տե՛ս UNDP, 2005, Institutional arrangements to combat corruption հասանելի էր՝ http://regionalcentrebangkok.undp.or.th/practices/governance/documents/Corruption_Comparative_Study-200512.pdf
¹⁴ Տե՛ս De Souza, L, 2009, Anti-corruption agencies: between empowerment and irrelevance, հասանելի էր՝ <http://www.u4.no/recommended-reading/anti-corruptionagencies-between-empowerment-and-irrelevance/>

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

«Նստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի պետ,
«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ»

ԱՆԻ ԹԵՐԶՅԱՆ

«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ

ԱՐԱՄ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի քրեաբան

ՀՀ-ՈՒՄ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՉԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ)

Հանցավոր վարքագծի պատճառները խորապես հասկանալու, հանցավորության պատճառներն ու պայմանները բացահայտելու համար կրիմինոլոգիան ուսումնասիրում է ոչ միայն հանցանք կատարած անձին, այլ նաև հանցագործությունից տուժածներին կամ հանցագործության զոհերին: Հանցավորության տարածվածության, հանրային վտանգավորության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հանցավորության վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն: Դա թույլ կտա գնահատել հանցավորության և դրա առանձին տեսակների վիճակը, զարգացման միտումները տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, հանցավորության դեմ պայքարի և դրա կանխարգելման գործում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, հարաբերականորեն ճշմարտացի պատկերացում կազմել հանցավորության ապագա վիճակի մասին և դրա հիման վրա հանցավորության կանխման արդյունավետ միջոցներ մշակել: Հանցավոր վարքագծի պատճառներն առավել խորապես հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն հանցանք կատարած անձին, այլ նաև հանցագործությունից տուժածներին կամ հանցագործության զոհերին, նրանց անձնային և հանցանքի կատարման մեխանիզմում իրենց վարքագծի և դերի առանձնահատկությունները, հանցագործի և նրա զոհի միջև կրիմինալոգիական նշանակություն ունեցող հա-

րաբերությունները և կապերը: Հանցագործի և զոհի միջև գոյություն ունի որոշակի փոխազդեցություն, փոխադարձ կապ, զոհն ինքնին ազդեցության պասիվ օբյեկտ չէ, այլ որոշակի ձևով ուղղորդում և պայմանավորում է հանցավորի վարքագիծը¹:

Ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում կարևորվում է սեփականության բոլոր ձևերի պաշտպանությունը, առավել ևս՝ քրեաիրավական պաշտպանությունը: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում ավազակությունն աչքի է ընկնում հասարակական վտանգավորության առավել բարձր աստիճանով, քանի որ ուղեկցվում է անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով: Կողոպուտը բնութագրվում է որպես ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն: Դա հափշտակության ավելի վտանգավոր եղանակ է, քան գողությունը: Նշված հանցատեսակի դեպքում հանցագործը տուժողի նկատմամբ դրսևորում է ցինիկ և արհամարհական վերաբերմունք՝ նպատակ ունենալով տիրանալու վերջինիս գույքին բացահայտ, ապօրինի, անհատույց, շահադիտական դրդումներով: Կողոպուտի հանցակազմի օբյեկտն ուրիշի սեփականությունն է կամ օրինական տիրապետման ներքո գտնվող գույքը:²

«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կի-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016


¹ Տե՛ս Курганов С. И. «Криминология», учеб. пособие. М., 2010, էջ 69:
² ՀՀ Քրեական իրավունք, Հատուկ մաս, Երևան, 2012, էջ 378:

րառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնը հետազոտություն է իրականացրել «Կողոպուտների և ավազակությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտումը ՀՀ-ում» թեմայով: Հետազոտությունն իրականացվել է մի քանի ուղղություններով և մեթոդներով, որոնցից մեկն էլ քրեական գործերի ուսումնասիրությունն է: Այս մեթոդով ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության դատարաններում 2008-2015թթ. քննված 476 քրեական գործեր: Կազմվել է քրեական գործի ուսումնասիրության հարցաթերթ, որում լրացվել են տվյալներ դատապարտյալների վերաբերյալ, տվյալներ հանցագործության վերաբերյալ, հանցագործության ժամը, վայրը, հանցագործության դրդապատճառները, տվյալներ տուժողի վերաբերյալ, նրա հարաբերությունները հանցագործի հետ, տվյալներ այն մասին, թե տուժողը նպաստե՞լ է արդյոք հանցանքի կատարմանը և կոնկրետ ինչպիսի վարքագծով է նպաստել, թե արդյոք կա-

րողացել է կանխել հանցագործությունը, և եթե՝ այո, ապա ինչպիսի միջոցներով՝ հանցավորի հետ հոգեբանական կոնտակտ հաստատելով, դիմադրություն ցույց տալով կամ իրավապահ մարմիններին և ականատեսներին օգնության կանչելով, և ինչպե՞ս է գործին ընթացք տրվել: Այժմ մանրամասնորեն քննարկենք վերլուծության արդյունքով ստացված տվյալները: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են թվով 476 քրեական գործեր: Ուսումնասիրված քրեական գործերից 307-ը (64,5%) վերաբերում է կողոպուտներին (ՀՀ քր.օր. 176 հ.), որից 65-ը (13,7%)՝ կողոպուտի փորձին (ՀՀ քր.օր. 34-176 հ.): Չզալի մաս են կազմում այն դեպքերը, երբ կողոպուտիչները գործել են խմբի կազմով (9,5%): Մնացած 169-ը (35,5%) ավազակությունների վերաբերյալ են (ՀՀ քր. օր. 175 հ.), որից 102-ը՝ (21,4%) խմբի կազմով, իսկ նրանցից 81-ը (21,4%) գործել է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ (տես **գրաֆիկ 1-ում**):

Գրաֆիկ 1

2008-2015թթ. կատարված բռնի - շահադիտական հանցագործությունների ընդհանուր պատկերը




Իմբային հանցավոր գործունեությունն այլ հավասար պայմաններում բարձր հասարակական վտանգավորություն ունի, քանի որ դրա իրականացման գործընթացում տեղի է ունենում երկու և ավելի անձանց ջանքերի միավորում հանցավոր արդյունքի հասնելու համար, ինչը կարող էր տեղի չունենալ, եթե նրանք գործեին միայնակ³:

Ուսումնասիրված քրեական գործերից

ակնհայտ է դառնում, որ այս հանցագործությունները կատարող անձանց մեծամասնությունը՝ 96,9%-ը, տղամարդիք են, իսկ 3,1%-ը՝ կանայք: Դա բացատրվում է տղամարդկանց և կանանց սոցիալական դերով և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Դատապարտյալների տարիքային բաշխվածությունը կարող եք տեսնել **գրաֆիկ 2-ում**:

³ Տես Ս.Պ. Բալանյան քրեաբանություն և հանցագործությունների պրոֆիլակտիկա, Երևան, 2011, էջ 224:

Տարիքային բաշխվածություն



Ինչպես տեսնում ենք՝ կատարված հանցագործությունների գերակշռող մասը իրականացվել է երիտասարդ և միջին տարիքի անձանց կողմից: Հանցագործների տարիքային բնութագիրը թույլ է տալիս եզրակացնել, որ տարբեր տարիքային խմբի ներկայացուցիչներ ունեն տարբեր հանցավոր վարքի առանձնահատկություններ և քրեաձին ակտիվություն: Գրականության մեջ նշվում է, որ երիտասարդ տարիքի անձինք առավել հաճախ կատարում են ագրեսիվ, իմպուլսիվ բնույթի հանցագործություններ: Մտահոգիչ է նաև այն, որ անչափահասների հանցավորության աճ է նկատվում: Ներկայումս անչափահասների հանցավոր և շեղվող վարքագծի կանխամաք զբաղվող հիմնական կառույցը ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներն են: Շատ կարևոր է նաև, որ ծնողները ևս ներգրավվեն այդ աշխատանքներին: Մինչդեռ շատ ծնողներ իրենց բարոյահոգեբանական առանձ-

նահատկություններով, մանկավարժական գիտելիքների մակարդակով պատրաստ չեն դրան, ուստի նման դեպքերում աշխատանք պետք է կատարվի նաև ծնողների հետ⁴:

Նման հանցագործների անձը բնութագրող մեկ այլ որոշիչ գործոն է համարվում կրթվածության մակարդակը: Կրթվածության մակարդակը անբակտելիորեն կապված է անձի մշակութային-բարոյական դիրքորոշումների և սկզբունքների հետ, որոնց հիման վրա ձևավորվում են անձի հետաքրքրությունները, ձգտումները, ցանկությունները և պահանջմունքները:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ դատապարտյալների կեսից ավելին՝ 55,1%-ը ունի միջնակարգ հանրակրթական կրթություն, 31,5%-ը՝ մինչև 8-րդ դասարան, 6,5%-ը՝ բարձրագույն, 6,2%-ը՝ միջնակարգ մասնագիտական, իսկ 6%-ը կրթություն չունի:

Հետաքրքրական են նաև դատապարտյալների զբաղվածության վերաբերյալ տվյալները:

Զբաղվածություն			
չի աշխատում	83,5%	գյուղատնտեսությամբ զբաղվող	0,6%
սպասարկման ոլորտում աշխատող	6,2%	գործարար	0,6%
սովորում է դպրոցում	2,2%	արդյունաբերության ոլորտում աշխատող	0,6%
սովորում է բուհում	2,2%	առողջապահության ոլորտի աշխատող	0,3%
արհեստավոր	2,2%	զինված ուժերում, ոստիկանությունում, իրավապահ մարմիններում աշխատող	0,3%
պետական ծառայող	0,9%	կրթության և գիտ. ոլորտի աշխատող	0,3%

⁴ Տե՛ս Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, 2010, էջ 87, 91:

Ինչպես տեսնում ենք՝ վերը նշված աղյուսակում դատապարտյալների գերակշռող մասը գործազուրկ է եղել: Գործազրկությունն էական հանգամանակություն ունի, քանի որ ոչ միայն խորացնում է հակասությունը պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև, այլև էական բացասական հոգեբանական ազդեցություն է թողնում: Հիմնական բացասական ազդեցությունն այն է, որ գործազուրկն անպաշտպանվածության գագաթնակետն է: Նա պետք չէ ոչ իր ընտանիքին, ոչ հասարակությանը: Բացի դա՝ գործազուրկի մեջ ձևավորվում է թշնամական վերաբերմունք անարդարացի հասարակության նկատմամբ: Անձն անում է ամեն ինչ այդ վիճակից դուրս գալու համար:

Ուսումնասիրվող հանցատեսակների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև նախկինում դատապարտված լինելու հանգամանքը: Այսպես, ըստ կատարված հետազոտության տվյալների՝ 69,3%-ը նախկինում դատապարտված չի եղել, միայն 30,7%-ն է եղել նախկինում դատապարտված, որոնցից 50%-ը գողության համար դատապարտվածներն են, 16,3%-ը՝ կողոպուտի, 10,2%-ը՝ ավազակության, 8,2%-ը՝ խարդախության:

Ինչպես տեսնում ենք՝ նախկինում կատարված հանցագործությունները ևս դասվում են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքը: Սեփականության դեմ ուղղված հանցագործություններին նպաստող պայմանները բազմազան են: Ամենից առաջ՝ դա տուժողների անփույթ վերաբերմունքն է գույքի պահպանության նկատմամբ, կարելի է նշել նաև


նրանց անհոգությունը և ինքնավստահությունը:

Նախկինում դատապարտված հանցագործների 46,9%-ը դատապարտվել է մինչև 3 տարի ժամկետով, 27,5%-ը՝ մինչև 6 տարի ժամկետով, 18,4%-ը՝ 9 տարի, իսկ 7,2%-ը՝ մինչև 12 տարի տևողությամբ: Պետք է նշել նաև, որ նախկինում կատարված հանցագործությունների համար ամբողջական պատիժ կրել է նրանց 37,8%-ը, իսկ 62,2%-ը ազատվել են պատժի հետագա կրումից (պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով, պայմանական վաղաժամկետ ազատման հիմքով, համաներմամբ և ներմամբ): Ազատագրվումը մարդու կյանքի տարբեր ոլորտներում բացասական ազդեցություն է ունենում: Դա կարող է ազդել անձի և նրա ընտանիքի նյութական բարեկեցության և եկամտի վրա, նվազեցնել պատիժը կրելուց հետո աշխատանք ձեռք բերելու հնարավորությունը: Ազատագրված ման վայրերում ավելի մեծ է շրջապատի և միջավայրի բացասական ազդեցությունը, և ազատագրվումն ավելի շուտ նպաստում է կրկնահանցագործությանը, քան կանխում, քանի որ պատիժը կրելու ընթացքում ազատագրվածները միմյանցից շատ բան են սովորում, տեղի է ունենում հանցավոր փորձի փոխանակում: ՀՀ-ում ազատագրվումն անձին ուղղելու ուղղությամբ այդքան էլ արդյունավետ չէ:

Առավել խոր պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել նշված հանցատեսակների համար կարևոր նշանակություն ունեցող տվյալներ, ինչպիսիք են՝ հանցանքի կատարման տեղը և ժամանակը (տես **գրաֆիկ 3-ում**):

Գրաֆիկ 3

Հանցագործության կատարման ժամանակը



Ինչպես նկատեցինք՝ հանցագործությունների մեծ մասը կատարվել է ցերեկային ժամերին, իսկ տեղանքի առումով պետք է նշել, որ հանցագործությունները հիմնականում կատարվել են փողոցներում (33,4%), դրան հաջորդում է տուժողների բնակարանում կատարվածները (19,3%), 12,2%-ը կատարվել է բակերում, քիչ չեն նաև խանութներում կատարվածները (8,4%), այլ վայրերում կատարվածները միասին կազմում են 26,7%:

Հարբեցողությունը նպաստում է ամենատարբեր հանցագործությունների կատարմանը՝ դիտավորյալ և անզգույշ, նախնական և ռեցիդիվ, բռնի և շահադիտական: Շահադիտական հանցագործությունների կատարման ժամանակ հարբեցողությունը կարող է դրսևորվել հետևյալ կերպ՝

- իջեցնում է խղճի, ամոթի, վախի և պատժի ներգործության կարողությունը.
- դառնում է հափշտակության կատարման առիթ.

- անհրաժեշտություն է առաջացնում վարել շվայտ կյանք՝ թանկարժեք ռեսուրսների այցեր, վճարովի սեռական ծառայություններ և այլն⁵:

Հետաքրքրական է, որ մեր կողմից ուսումնասիրվող հանցագործների գերակշռող մասը (87,2%) գտնվել է սթափ վիճակում, նրանց միայն 12,8%-ն է եղել ակտիվ օգտագործած:


Ստորև կներկայացնենք հանցագործություններից տուժած անձանց.

Ուսումնասիրված քրեական գործերի ընդհանուր զանգվածում տուժողների թիվը 499 է: Տուժողների գերակշռող մասը՝ 77,8%-ը, անձանոթ է եղել հանցավորին, ծանոթ է եղել միայն 17%-ը, 2,8%-ը եղել են հարևաններ, իսկ նրանց 2,4%-ը գտնվել են տարբեր հարաբերությունների մեջ, այդ թվում և՛ ազգականներ:

Գրաֆիկ 4-ում պատկերված է վերը նշված հանցագործություններից տուժածների տարիքային բաշխվածությունը:

Գրաֆիկ 4

Տուժողների տարիքային բաշխվածությունը



Ինչպես տեսնում ենք՝ նշված հանցագործություններից առավել հաճախ տուժել են 50 տարեկանից բարձր անձինք: Նշված հանգամանքը գրականության մեջ բացատրվում է այն հանգամանքով, որ տարեցներն օժտված են ավելի բարձր վիկտիմալությամբ, և դա այն պատճառով, որ նրանք ֆիզիկապես ավելի թույլ են և ունակ չեն առավել լուրջ դիմադրություն ցույց տալու:

Անդրադառնալով տուժողների սեռին՝ պետք է նշել, որ, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցագործություններից ավելի հաճախ տուժում են տղամարդիկ, որոնց տեսակարար կշիռը տուժողների զանգվածում կազմում է 53-54%: Սա պայմանավորված է ինչպես տղամարդկանց սոցիալական առավել ակտիվությամբ, այնպես էլ բազմաթիվ այլ գործոններով⁶: Մեր

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

⁵ Տե՛ս Ս.Պ. Բալանյան Քրեաբանություն և հանցագործությունների պրոֆիլակտիկա, Երևան, 2011, էջ 379:

⁶ Տե՛ս Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնները ՀՀ-ում, Երևան, 2014, էջ 65:

կողմից կատարված ուսումնասիրությունները ևս ցույց տվեցին, որ տուժողների զանգվածում տղամարդիկ 51,3% են կազմում, իսկ կանայք՝ 48,7%:

Իսկ այժմ ներկայացնենք տուժողների զբաղվածության վերաբերյալ տվյալները: Այսպես՝ նրանց 35%-ը չէր աշխատում, 16,3%-ը սպասարկման ոլորտի աշխատող էր, 7%-ը՝ գործարար, 6%-ը՝ թոշակառու, 2,6%-ը սովորում էր դպրոցում, 1,8%-ը զբաղվում էր ոսկերչությամբ, 1,6%-ը սովորում էր բուհում, 1,4%-ը շինարարության ոլորտի աշխատող էր, մյուս 1,4%-ը՝ գյուղատնտեսությամբ զբաղվող, հաջորդ 1,4%-ը ֆինանսական ոլորտի աշխատող էր, 3,8%-ը այլ ոլորտի ներկայացուցիչներ են, 21,5%-ը գործով հայտնի չէր: Ինչպես նկատեցինք՝ գործազուրկների տեսակարար կշիռը տուժողների զանգվածում բավականին մեծ է:

Վիկտիմայնությունը ձևավորող գործոններից է նաև անձի առողջական վիճակը: Ըստ կատարված ուսումնասիրությունների՝ հանցագործության պահին տուժողների 99,2%-ը եղել է առողջ: Վիկտիմիզացիայի առանձնահատկությունները պարզելու համար կարևոր է բացահայտել հանցագործի և տուժողի միջև հարաբերությունների և կապի բնույթը: Քրեական գործերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տուժողների գերակշռող մասը՝ 79,2%-ը, մինչև հանցագործությունը հանցավորի հետ հարաբերություններ չեն ունեցել, նրանց 11,1%-ը հանցավորի հետ ունեցել է լավ հարաբերություններ, 8,5%-ի դեպքում էլ հարաբերությունները եղել են չեզոք, իսկ այդ հարաբերություններում 1,3%-ը՝ լարված, կոնֆլիկտային: Տուժողը և նրա վարքագիծն էական դեր են կատարում հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում:


Վիկտիմոլոգիան ուսումնասիրում է նաև

հանցանքի կատարման մեխանիզմում տուժողի վարքագծի դերը և առանձնացնում է տուժողի վարքագծի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են պրովոկացիոն վարքագիծը, թեթևամիտ վարքագիծը, նպաստող վարքագիծը և այլն: Վարքագծի այս ձևերն ընդունված է անվանել մեղավոր վիկտիմայնություն, երբ տուժողն ինքն է հրահրում, դրդում մյուս կողմին հանցանք կատարելու կամ, այլ կերպ՝ նպաստում է դրա կատարմանը⁷:

Նշված հանցատեսակներից տուժածների 32,3%-ը նպաստել է հանցագործության կատարմանը, իսկ 67,7%-ը՝ ոչ (տես **գրաֆիկ 5-ում**):

Գրաֆիկ 5

Տուժողների վարքագիծը հանցանքի կատարման մեխանիզմում




Շատ դեպքերում հանցագործությունները կարող էին և չկատարվել, եթե հանցագործն իր ճանապարհին հանդիպեր խոչընդոտների, օրինակ՝ հետևողականության ու համառության զոհի կողմից, հուսալի պահպանված բնակարանի կամ գույքի և այլն:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ևս ցույց են տալիս տուժողների մեղքը հանցագործությունների կատարման գործում (տես **գրաֆիկ 6-ում**):

Գրաֆիկ 6

Տուժողներն ինչպես են նպաստել հանցագործությանը



⁷ Տես Курганов С. И. Նշված աշխ., էջ 70:

Տուժողների կողմից անվտանգության տարրական կանոնները չպահպանելը կամ թեթևամիտ վարքագիծը դրսևորվել է հետևյալով՝ 33,3%-ը անձանոթին ներս է հրավիրել տուն, 21,5%-ը միայնակ թանկարժեք զարդերը վրան զբոսնել է, 11,8%-ը ցուցադրել է իր ունեցած թանկարժեք իրերը, 10,4%-ը տանից դուրս գալիս չի փակել դուռը կամ պատուհանը, 9%-ը ցուցադրել է իր ունեցած գումարը, 6,2%-ը գիշերվա ուշ ժամին միայնակ եղել է ամայի վայրում, 7,7%-ն էլ այլ արարքներով է հրահրել, օրինակ՝ աչքաթող է արել դրամարկը, միայնակ թանկարժեք զարդերը վրան եղել է ամայի վայրում, անձանոթի հետ գիշերվա ուշ ժամին գնացել է հյուրանոց և այլն: Կարևոր է պարզել նաև, թե տուժողը կարողացել է արդյոք կանխել հանցագործությունը, և եթե կարողացել է, ապա ինչ եղանակով:

Հետազոտությունից պարզ դարձավ, որ տուժողների շատ քիչ մասն է կարողացել կանխել հանցագործությունը (13,4%): Նրանց 33,8%-ը կանխել է հանցագործությունը՝ դիմադրություն ցույց տալով, 16,9%-ը՝ օգնության կանչելով իրավապահ մարմիններին, 13,8%-ը՝ հետապնդելով հանցավորին, մյուս 13,8%-ը՝ օգնության կանչելով ականատեսներին: Նրանց 9,2%-ը խուսափել է ավելի մեծ վնասից՝ դիմադրություն ցույց տալով, 6,2%-ը՝ օգնության կանչելով ականատեսներին, և 4,6%-ը օգնության կանչելով իրավապահ մարմիններին: Չափազանց մտահոգիչ է այն, որ տուժողների 86,6%-ը չի կարողացել խուսափել վնասից: Սա նշանակում է, որ վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակը մեր բնակչության մեջ շատ ցածր է, և մարդիկ պարզապես չեն տիրապետում հանցագործություններից պաշտպանվելու տարրական կանոններին և հնարքներին:

Պետք է նշել, որ հարբածությունը ևս անձի վարքագծի վրա ազդող վիկտիմոգեն գործոն է:

Ստացված տվյալներից երևում է, որ հանցանքի կատարման պահին տուժողների 3,3%-ը ունեցել է ակրոհոլային հարբածություն, իսկ 96,7%-ն ընդհանրապես հարբած չի եղել: Սա էլ իր հերթին թույլ է տալիս ենթադրել, որ հարբածությունը մեր հանրապետությունում դեռևս էական վիկտիմոգեն նշանակություն չունի:

Հանցագործությունների կանխարգելման գործում իր ուրույն դերն ունի նաև հասարակության անդամների քաղաքացիական ակտիվությունը: Այս առումով կարևոր է պարզել, թե հանցագործության պահին ականատես վկաներ եղել են, թե ոչ, և եթե եղել են, ապա ինչպիսի վարքագիծ են դրսևորել: Ստացված արդյունքներից պարզ է դառնում, որ կատարված հանցագործությունների 25,6%-ի դեպքում են միայն ականատեսներ եղել: Նրանք էլ, իրենց հերթին, դրսևորել են հետևյալ վարքագիծը. 77,7%-ը փորձել է օգնել տուժողին, 17,4%-ը անտարբեր է եղել և հեռացել է դեպքի վայրից, 5%-ն էլ չի փորձել օգնել տուժողին, բայց օգնության են կանչել ուրիշներին կամ իրավապահ մարմիններին: Հետաքրքրական է նաև այն, որ օգնության ձեռք մեկնած ականատեսներից 61,4%-ին հաջողվել է կանխել հանցագործությունը, իսկ 37,6%-ին՝ չի հաջողվել կանխել:

Կարևոր էր պարզել նաև, թե ինչպես է գործին ընթացք տրվել: Ուսումնասիրված քրեական գործերի 82,6%-ին ընթացք է տրվել տուժողի դիմումի հիման վրա, իրավապահ մարմինների նախաձեռնությամբ՝ 15,1%-ին, 1,5%-ին ընթացք է տրվել տուժողի մերձավորների դիմումի հիման վրա, իսկ 0,6%-ն էլ՝ ականատեսների դիմումի հիման վրա:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հանցավորության և դրա առանձին տեսակների վիկտիմոլոգիական կանխմանը, որը պետական ու հասարակական միջոցառումների համակարգ է՝ բնակչության ու առանձին անձանց հանցագործության զոհ դառնալու ռիսկի նվազեցմանն ուղղված: Իսկ դրա համար անհրաժեշտ է հանրապետությունում հանցավորության վիկտիմոլոգիական խնդիրների բացահայտմանն ուղղված գիտական խոր հետազոտությունների իրականացում, դրանց հիման վրա հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխմանը և բնակչության վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում ու իրականացում:

ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս,
Իրավագիտության հայցորդ

ԼՂՉ ՕՄՔՈՒԴՍՄԵՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կառավարման պետական մարմինների կամայականություններից և պաշտոնյաների իշխանական լիազորությունների չարաշահումներից մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում խորհրդարանական լիազորի (ombudsman) ինստիտուտը:¹

Օմբուդսմենի ինստիտուտն առաջացել է Սկանդինավյան թերակղզում՝ Շվեդիայում, երբ 1809 թվականին, այդ երկրի սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվեցին արդարադատության պաշտպանի գործառույթները: Օմբուդսմենական իրավապաշտպանությունը եվրոպական և մյուս երկրներ ներթափանցեց միայն 20-րդ դարի սկզբներին:

Չարագաման ժողովրդավարական ուղին բռնած երկրներն իրենց պարտքն են համարում ներդնել օմբուդսմենի ինստիտուտը, որը տարբեր պետություններում ունի տարբեր կարգավիճակ ու լիազորություններ: Սակայն ընդհանուրը մնում է այն, որ օմբուդսմենը համարվում է անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ. պաշտպանում է քաղաքացիների այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից: Օմբուդսմենին կարող են դիմել բոլոր քաղաքացիներն առանց որևէ խտրականության և բյուրակրատական քաշքշուկների, քաղաքացիներին ցուցաբերվող իրավական օգնությունը կատարվում է անվճար հիմունքներով: Բացի դրանից, օմբուդսմենի

կողմից կայացված ակտերը՝ եզրակացությունները, չունեն պարտադիր իրավաբանական ուժ այն մարմնի համար, ում դեմ կայացվել է եզրակացությունը, ակտերն այդ միայն խորհրդատվական ուժ ունեն: Այս բոլոր հատկանիշների շնորհիվ էլ օմբուդսմենի հեղինակությունն ու ժողովրդականությունը գտնվում է բարձր մակարդակի վրա ու այն տարածված է աշխարհի գրեթե 100 երկրում:²

Գոյություն ունեն օմբուդսմենի ինստիտուտի զանազան անվանումներ՝ արդարադատության օմբուդսմեն, պառլամենտական լիազոր, հետաքննությունների գործերով պառլամենտական լիազոր, օմբուդսմեն, բողոքների գծով լիազոր, մարդու իրավունքների լիազոր, միջնորդ, արդարադատության հանձնակատար, ժողովրդի պաշտպան, հասարակական պաշտպան և այլն, իսկ ԼՂՀ և ՀՀ-ում՝ մարդու իրավունքների պաշտպան:³

Կան երկրներ, որտեղ օմբուդսմենի գործառույթներն իրականացվում են կոլեգիալ մարմնի կողմից (Ավստրիա, Լատվիա, Նեպալ): Իսկ որոշ երկրներում օմբուդսմենի ինստիտուտը գործում է նաև վարչատարածքային միավորների մակարդակով (Ռուսաստան, ԱՄՆ): Առանձին երկրներում գործում են օմբուդսմենի մասնագիտացված հաստատություններ՝ երեխաների իրավունքների պաշտպանության (Շվեդիա, Ռուսաստան, Լիտվա, Նորվեգիա), բանտի և պատժի կատարման հարցերով (Անգլիա, Ուելս), զինծառայողների հարցերով (Նորվեգիա, Շվեդիա), սպառողների գործերով (Ֆինլանդիա), ազգային փաքրամասնությունների գործերով

¹ Права человека. Учебник для вузов. Ответственный редактор – член-корр. РАН, доктор юридических наук Е. А. Лукашева. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА • М), 2001. с-430
² ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունները / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010, էջ՝ 786
³ Մարդու իրավունքներ /Վ.Ն. Այվազյան: Խմբ.՝ Ն.Ա. Այվազյան:- Երրորդ լրամշակված հրատարակություն:- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 316

(Հունգարիա), կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով (Ֆինլանդիա) և այլն:⁴

Պետք է նշել, որ օմբուդսմենի ինստիտուտի առկայությունը նախընտրում են ունենալ ոչ միայն հին և նոր ժողովրդավարական երկրները, այլև չճանաչված պետությունները: Ընդ որում, այդ երկրներում օմբուդսմենի ինստիտուտը սահմանվում է ոչ միայն օրենսդրական մակարդակով, այլև սահմանադրական (ԼՂՀ, ՄՄՀ): Ավելին, անտեսելով իրենց պետության միջազգային ճանաչման հետ կապված խնդիրները, չճանաչված մի շարք պետություններ միմյանց միջև կնքել են համագործակցության պայմանագրեր. Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության օմբուդսմենների միջև կնքված համաձայնագրին⁵ 2010 թվականի դեկտեմբերի 10-ին միացավ նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը: Նրանք իրենց գործունեության հիմքում դրեցին միջազգային այնպիսի հեղինակավոր պայմանագրեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրերը, մարդու, քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային-իրավական այլ ակտեր ու նորմեր:⁶

Նկատելի է նաև այն փաստը, որ օմբուդսմենի պաշտոնում առավել հաճախ ընտրվում (նշանակվում) են կանայք: Իսկ այն երկրներում որտեղ գործում է նաև երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ դեպքերի ճնշող մեծամասնությամբ օմբուդսմենի պաշ-

տոնը զբաղեցնում են հենց գեղեցիկ սեռի ներկայացուցիչները:

Իրավաբանների միջազգային ընկերակցության կողմից տրված սահմանման համաձայն՝ Օմբուդսմենը պետության Սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության մարմնի ակտով նախատեսված ծառայություն է, որը դեկավարվում է բարձրաստիճան անկախ պաշտոնատար անձի կողմից. նա պատասխանատու է օրենսդիր իշխանության առջև, բողոքներ է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնյաների կողմից տուժած անձանցից, գործում է սեփական հայեցողությամբ և իրավասու է կատարել հետաքննություն, պետական մարմիններին առաջարկել վերացնելու թույլ տրված իրավախախտումները և այդ կապակցությամբ զեկույցներ ներկայացնել օրենսդիր իշխանության մարմնին:^{7,8}

ԼՂՀ Սահմանադրության 8-րդ գլուխը (119-120 հոդվածներ) վերաբերվում է Մարդու իրավունքների պաշտպանին: Սահմանադրության 119-րդ հոդվածը սահմանում է, որ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածը նշում է, որ Պաշտպանը նպաստում է մարդու և քաղաքացու իրավունքների, դրանց պաշտպանության ձևերի ու մեթոդների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանը և նրա համապատասխանեցմանը միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, մարդու իրավունքի բնագավառում միջազգային համա-

⁴ Права человека. Учебник для вузов. Ответственный редактор – член-корр. РАН, доктор юридических наук Е. А. Лукашева. – М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА • М), 2001. с-435

⁵ Նշված երկրների միջև համաձայնագիրը կնքվել է 2008 թվականի հոկտեմբերի 1-ին: Համաձայնագրի բովանդակությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղման միջոցով՝ <http://www.ombudsmanpmr.org/dogovor1.htm>

⁶ Տես Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության Մարդու իրավունքների լիազորի պաշտոնական կայքէջի հետևյալ հղումը՝ http://www.ombudsmanpmr.org/dogovora_o_sotrudnichestve.htm /11.07.2016./

⁷ Հղումն ըստ Վ. Այվազյանի «Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ձևավորման և կայացման հիմնահարցերը» հոդվածի – ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՀՀ Իրավաբանների միություն, ԵՊՀ իրավագիտության գաղկուլտետ Թիվ 1 /71/ 2016թ. էջ՝ 53

⁸ Бойцова В. В. Служба защиты прав человека и гражданина, Мировой опыт, Изд БЕК, Москва, 1996. стр VI.

գործակցության զարգացմանը, մարդու իրավունքի և ազատության հարցերով իրավական դաստիարակությանը:

Դեռևս 2008 թվականին ԼՂՀ Պաշտպանը դիմել էր Օմբուդսմենների Եվրոպական ինստիտուտի գործադիր կոմիտեին՝ այդ հաստատության լիիրավ անդամ դառնալու խնդրանքով: Սկսած 2009թ. օգոստոսի 31-ից ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանը Եվրոպական Օմբուդսմենի Ինստիտուտի ինստիտուցիոնալ անդամ է հանդիսանում, Պաշտպանի տարեկան զեկույցները սկսեցին ուղարկել նաև հեղինակավոր այդ կառույցին:⁹ ԼՂՀ-ի անդամակցությունն Օմբուդսմենի Եվրոպական ինստիտուտին բուռն առարկություններ ու քննադատություն առաջացրեցին ինչպես Ադրբեյջանի օմբուդսմենի, այնպես էլ այդ երկրի պետական իշխանության շրջանակներում: Հայկական կողմի համար խնդիրը բարեհաջող լուծում գտավ, և ՕԵԻ-ին անդամակցությունը հանդիսացավ ԼՂՀ-ի՝ որպես չճանաչված պետության առաջին ներկայությունը միջազգային կազմակերպությունում:

Հատկանշական է, որ ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքն ընդունվել է ավելի վաղ, քան ԼՂՀ Սահմանադրությունը (ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ ՄԻՊ) մասին օրենքն ընդունվել է 2005 թ. փետրվարի 09-ին, իսկ Սահմանադրությունը՝ 2006թ. դեկտեմբերի 10-ին):

Համաձայն ԼՂՀ ՄԻՊ մասին օրենքի 3-րդ հոդվածի՝ «Պաշտպանի պաշտոնում նշանակվում է 25 տարին լրացած ԼՂՀ այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն»:¹⁰

Պետք է նկատել, որ 2016 թվականին արված օրենսդրական փոփոխությունից հետո, Պաշտպանի թեկնածուի տարիքը 35 տարեկանից իջեցվել է 25-ի, որը կարելի է առաջադիմական համարել: Ինչ վերաբերում է կրթության ցենզին, ապա ցանկալի է, որ պահանջվի

հենց իրավաբանական բարձրագույն կրթության առկայությունը, քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիքների ու օրենսդրության քաջատեղյակություն: Ավելին, բարոյական բարձր հատկանիշներից ու հեղինակությունից բացի, նախընտրելի է այդ պաշտոնին ընտրել (նշանակել) գիտությամբ զբաղվող, մանկավարժական ստաժ ունեցող անձի: Իրավաբանական գիտության ներկայացուցիչ լինելը կնպաստի ոչ միայն մարդու խախտված իրավունքների որակյալ պաշտպանությանը, այլև կօգնի ձեռնարկելու միջոցներ՝ իրավունքի քարոզչության և իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ:

ԼՂՀ Սահմանադրության 120-րդ հոդվածը սահմանում է, որ Մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Մարդու իրավունքների պաշտպան:

Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է:

Տարատեսակ կախվածություններից, կաշկանդվածությունից, ինչպես նաև կողմնակի ազդեցություններից խուսափելու նպատակով Սահմանադրությունը պահանջում է, որպեսզի Պաշտպանը չզբաղեցնի այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ կազմակերպություններում, չզբաղվի ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարի այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ: ՄԻՊ-ի անկախությունն երաշխավորված է Օրենքի 5-րդ հոդվածով, որի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն

⁹ Տես ԼՂՀ ՄԻՊ-ի 2009 թվականի տարեկան զեկույցը՝ <http://www.ombudsokr.am/>

¹⁰ ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը տես՝ ԼՂՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՍՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ԼՂՀ արդարադատության նախարարություն, <http://arlexis.am/> /11.07.2016./

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներին, նաև առաջնորդվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով: Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան սահմանված է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Պաշտպանի որոշումները վարչական ակտ չեն հանդիսանում և բողոքարկման ենթակա չեն:

ԼՂՀ ՄԻՊ-ի մասին օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ այդտեղ գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

Պաշտպանին իրավունք ունի դիմել ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը:

Արձանագրենք, որ ԼՂՀ Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մի զգալի մասը ստացվում է հենց այդ այցելությունների ժամանակ (մանավանդ հարկադիր պահման վայրերից): Դա են վկայում Պաշտպանի տարեկան զեկույցում ամփոփված տվյալները:¹¹

Պաշտպանի լիազորությունները լայն են (ԼՂՀ ՄԻՊ-ի մասին օրենքի 12-րդ հոդված: Առաջադիմական պետք է համարել ԼՂՀ Սահմանադրության այն հոդվածը (114-րդ), որով Պաշտպանին իրավունք է տրվում դիմել Գերագույն դատարան՝ օրենքների, ԱԺ որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառա-

վարման մարմինների որոշումների՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցով: Պաշտպանն այդ լիազորությունը գործնականում արդեն իրականացրել է:

Աշխարհի բոլոր օմբուդսմեններին հատուկ ընդհանրություններից է այն, որ նրանք ամեն տարի հանդես են գալիս տարեկան զեկույցով: ԼՂՀ ՄԻՊ-ի մասին օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ընդհանուր իրավիճակի մասին զեկույց, այն, որպես կանոն, ներկայացվում է նաև Ազգային ժողովին՝ նրա գարնանային նստաշրջանի ընթացքում: Պաշտպանը զեկույցը տրամադրում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Ամենամյա զեկույցի միջոցով Պաշտպանը երկրում առկա հիմնախնդիրների լուծման վրա է սևեռում ոչ միայն պետական իշխանության մարմինների, այլև ամբողջ հանրության ուշադրությունը, որով զգալի ազդեցություն է թողնում միջազգային կառույցներում մեր երկրի վարկանիշի վրա:¹²

Նշենք, որ իր ստեղծման օրից (2008թ. ապրիլի 16-ին Ազգային ժողովն ընտրեց ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանին, իսկ մայիսին ձևավորվեց նրա աշխատակազմը) ԼՂՀ Պաշտպանը դեռևս արտահերթ զեկույցով հանդես չի եկել: Թերևս բացառություն կարելի է համարել 2016թ. մայիսին հրապարակված Պաշտպանի միջանկյալ զեկույցն ադրբեջանա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

¹¹ ԼՂՀ ՄԻՊ-ի տարեկան զեկույցին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքջից՝ <http://www.ombudsokr.am/>

¹² Մարդու իրավունքներ /Վ.Ն. Այվազյան: Խմբ.՝ Ն.Ա. Այվազյան:- Երրորդ լրամշակված հրատարակություն:- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 336

կան զինված ուժերի կողմից ԼՂՀ խաղաղ բնակչության և Պաշտպանության բանակի զինճառայողների նկատմամբ՝ 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում կատարված դաժանությունների մասին:¹³ Նշված զեկույցն ուղարկվել է մարդու իրավունքների ոլորտի միջազգային կազմակերպություններին՝ ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարներին, ՄԱԿ-ի Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողին, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին, Եվրոպական օմբուդսմենների ինստիտուտին, Օմբուդսմենների միջազգային ինստիտուտին և այլն: Զեկույցը նաև ուղարկվել է Human Rights Watch, Amnesty International, Association for the Prevention of Torture, ինչպես նաև մի շարք այլ հեղինակավոր իրավապաշտպան միջազգային կազմակերպություններին:

Կարծում եմ՝ Պաշտպանի գործունեության արդյունավետությունն էլ ավելի կմեծանա, եթե նրան պարբերաբար հրավիրեն մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող ԱԺ և կառավարության նիստերին, հասարակական քննարկումներին:

Մարդկանց մի մասը (մանավանդ ավագ սերնդի ներկայացուցիչները), որոնք վաղուց արդեն հիասթափվել են պետական պաշտոնյաների կամայականություններից, լիահույս չեն, որ Պաշտպանը կկարողանա իրանց խնդիրները լուծել պատշաճ մակարդակով, որ իբր նա «լեզու կգտնի» այն պաշտոնատար անձանց հետ, ում կողմից խախտվել է մարդու իրավունքը: Մանավանդ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դիմումատուների մեծ մասը չգիտի Պաշտպանի գործունեության շրջանակները

և նրան է դիմում ամենատարբեր հարցերով, որոնք հաճախ չեն մտնում Պաշտպանի իրավասությունների ցանկի մեջ:

Կարելի է փաստել, որ ՄԻՊ-ին դեռևս տարիներ են անհրաժեշտ՝ ինչպես բնակչության շրջանում վստահություն ձեռք բերելու, այնպես էլ պետական ապարատում հաստատուն տեղ գրավելու համար:

Միևնույն ժամանակ նշենք, որ անկախության հաստատումից հետո Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներդրումը կարևորագույն ձեռքբերումներից մեկն է՝ իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ստեղծելու մտադրություն ունեցող Արցախի ժողովրդի համար:

Չի կարելի ասել, թե առանց ՄԻՊ-ի մեր երկրում մարդու իրավունքների պաշտպանությունը կլիներ վատթարագույն վիճակում: Այս հաստատությունը դեռևս շատ անելիքներ ունի ինչպես իր աշխատակիցների որակավորման բարձրացման, այնպես էլ բնակչության շրջանում վստահություն ու հեղինակություն ձեռք բերելու առումով: Պարզապես, ինչպես Սահմանադրության ընդունումը, իշխանության թևերի տարանջատումը, զսպիչների և հակակշիռների համակարգի տեղադրումը, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործարկումը հանդիսանում է մեր հանրապետության ինքնահաստատման կռվաններից մեկը: Իսկ սույն հոդվածում թվարկած և չթվարկած այլ խնդիրների կարգավորման դեպքում ևս մեկ քայլ կկատարվի դեպի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ստեղծելու ճանապարհին:



¹³ Տես ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջի հետևյալ հղումը՝ http://www.ombudsokr.am/Legal_Assessment_May_2_human_shielding_use_of_indiscriminate_weapons_FINAL.pdf

ԱՆԻ ՄՈՒԹԱՑՅԱԼ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
 ՀՀ դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչության ավագ մասնագետ,
 Արդարադատության ակադեմիայի դասընթացավար

**«ՆՊԱՏԱԿԻ» ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
 ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՈՒՄ**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս»: Շինծու գործարքի նման լակոնիկ բնորոշմամբ չի բացահայտվում այն իրավական բովանդակությունը, որն անհրաժեշտ է՝ պրակտիկայում շինծու գործարքները բացահայտելու և վերջիններիս ճիշտ իրավական գնահատական տալու համար, ինչն էլ կարող է հանգեցնել իրավական անորոշության, իսկ երբեմն էլ՝ միասնական դատական պրակտիկայի բացակայության:

Գործարքը շինծու որակելու հարցում վճռորոշ նշանակություն է ստանում շինծու գործարքով մեկ այլ գործարք քողարկելու նպատակի առկայությունը, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումից: Նշվածի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե որինք են շինծու գործարքի նպատակները, և արդյոք գործարքը շինծու որակելու համար բավարար է այլ գործարք քողարկելու նպատակի առկայությունը:

Ըստ գրականության մեջ արտահայտված տեսակետների մեծամասնության՝ առավել հա-

ճախ շինծու գործարքները կնքվում են հակաիրավական նպատակներով, այսինքն՝ օրենքով սահմանված արգելքներն ու սահմանափակումները շրջանցելու, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտելու, անհիմն առավելություններ ստանալու և այլ նպատակներով¹: Տեսական գրականության մեջ օգտագործվում են շինծու գործարքի կնքման նպատակ, շինծու գործարքի կնքման մեջ կողմերի օգուտ, շինծու գործարքի թաքնված նպատակ և մի շարք այլ արտահայտություններ²:

Նախքան շինծու գործարքի նպատակներին անդրադառնալը՝ անհրաժեշտ ենք համարում պարզել, թե ինչն է գործարքի իրավական նպատակը:

Գործարք կնքած սուբյեկտների հետապնդած նպատակը միշտ ունի է իրավական բնույթ՝ որոշակի գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման իրավունքի ձեռքբերում և այլն: Երբ գործարքի միջոցով իրականացվում են ոչ իրավաչափ գործողություններ, նպատակը և իրավական արդյունքը չեն կարող համընկնել: Գործարքի իրավաբանական նպատակները հարկ է տարբերակել գործարքի շարժառիթից, որից ելնելով՝ գործարքը կնքվում է: Շարժառիթը, որպես գիտակցված կարիք, գիտակցված մոտիվացիա, այն հենքն է, որի վրա ծագում է նպատակը: Այդ պատճառով շարժառիթները դրդում են սուբյեկտներին գործարքներ կնքելուն և գործարքի իրավական բաղադրիչը չեն

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

¹ Տե՛ս Сергеев А.П., “Некоторые вопросы недействительности сделок. Очерки по торговому праву”: Сборник науч. тр. / Под ред. Е.А. Крашенинникова, Ярославль, 2004.– Вып. 11, էջ 24:
² Տե՛ս Бежецкий Антон Юрьевич, “Недействительность мнимых и притворных сделок: проблемы теории и практики” Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук: Москва – 2013, էջ 98: Холоденко Ю. В., “Субъективная сторона в мнимых и притворных сделках” (“Бизнес в законе. Экономико-юридический журнал” Выпуск № 4/2007), էջ 255:

կազմում՝ բացառությամբ օրենքով հատուկ նախատեսված դեպքերի³: Ինչպես նշել է Վ.Ի. Սինայսկին՝ գործարքի նպատակը չպետք է շփոթել գործարքի շարժառիթների հետ: Շարժառիթները, ընդհանուր առմամբ, նշանակություն չունեն իրավական տեսանկյունից, իսկ եթե շարժառիթ է հակաիրավական նպատակին հասնելը, ապա այս դեպքում դժվար է շարժառիթը (կաուզան), որպես խթանող պատճառ, տարբերակել նպատակից^{4,5}:

Այսպիսով՝ ցանկացած վավեր գործարք կնքվում է որոշակի իրավական նպատակով, որն էլ կանխորոշված է տվյալ գործարքի օրենսդրական կարգավորումներում: Ընդ որում՝ գործարքի իրավական նպատակը համընկնում է այն իրավական արդյունքի հետ, որին հասնում են կողմերը՝ գործարքը կատարելով: Մինչդեռ անվավեր գործարքների իրավական նպատակը և իրավական արդյունքը չեն համընկնում: Ինչ վերաբերում է շինծու գործարքներին՝ շինծու գործարք կնքելիս կողմերը նպատակ են հետապնդում հասնելու այն իրավական արդյունքին, որը նրանք կունենային քողարկված գործարքը բացահայտ կնքելիս՝ միաժամանակ խուսափելով քողարկված գործարքի կնքման հետևանքով առաջացող իրենց համար բացասական իրավական հետևանքներից, որպիսիք կարող են լինել քաղաքացիական, հարկային և այլ բնույթի:

Այսպիսով՝ շինծու գործարքի սուբյեկտիվ կողմի առավել ամբողջական բացահայտման

նպատակով՝ հարկ է տարբերակել «**շինծու գործարքի նպատակը**», «**շինծու գործարքին դիմելու նպատակը (շինծու գործարքի կնքման շարժառիթը)**»⁶, «**քողարկող գործարքի իրավական նպատակը**» և «**քողարկված գործարքի իրավական նպատակը**»:

Ինչպես արդեն նշել ենք՝ շինծու գործարքի օրենսդրական բնորոշումից բխում է, որ շինծու գործարքի նպատակն է մեկ այլ գործարք քողարկելը⁷: «Քողարկել» բառն ուղիղ իմաստով նշանակում է ծածկել, պատել, քողածածկել, իսկ փոխաբերական իմաստով՝ ծածկել, թաքցնել, սքողել, պարտակել, պահել, վարագուրել⁸: «Քողարկել» բառի բացատրությունն արդեն իսկ ենթադրում է, որ գործարքը թաքցնելն ինքնանպատակ չէ: Գործարքը քողարկելուն կողմերը դիմում են, երբ առկա է լինում գործարքում կամ գործարքից դուրս որևէ բան թաքցնելու նպատակ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ շինծու գործարքները հաճախ կնքվում են՝ հիմնական և պարտավորության կատարման ապահովմանն ուղղված գործարքները քողարկելու նպատակով: Օրինակ՝ առուծախի պայմանագրով քողարկվում են փոխառության և գրավի պայմանագրերը: Նվիրատվության պայմանագրով քողարկվում է առուծախի պայմանագիրը, կտակը, ստացակառուցված ներդրումների ապահովումը, իրավաբանական անձանց միջև համատեղ գործունեության պայմանագիր կնքելով և անշարժ գույ-

³ Стн Гражданское право: 4 т.: Т. I: Общая часть. Учебник/отв. ред. Е.А. Суханов. 3-е изд., перераб. и доп., М.: - Волтерс Клувер, 2007, էջ 442, 444:

⁴ Стн Синайский В.И., “Русское гражданское право” М.: Статут, 2002, էջ 146:

⁵ Ինչ վերաբերում է «causa»-ի և իրավական նպատակի հարաբերակցությանը՝ նշենք, որ որոշ հեղինակներ նույնացնում են «causa» հասկացությունն իրավական նպատակի հետ, որին ձգտում են հասնել քաղաքացիական շրջանառության մասնակիցները գործարքներ կնքելիս (տես Гражданское право: 2 т.: Т. I: Учебник / отв. ред. Е.А. Суханов. 2-е изд., перераб. и доп., М., 2000, էջ 331 (автор главы – В. С. Ем.), Белов В. А., Гражданское право, Общая часть, Учебник М., 2002. էջ 223, Гражданское право России. Часть первая: Учебник / под. ред. З. И. Цыбуленко, М., 1998. էջ 180 (автор главы – Н. А. Баринов):)։ Մյուս հեղինակները ճիշտ են համարում գործարքի շարժառիթը և նպատակը տարբերակել գործարքի հիմքից («causa»-ից), այսինքն՝ այն տիպային իրավական արդյունքից, որին պետք է կողմերը հասնեն՝ գործարքը կատարելով (տես Гражданское право: Учебник Т. I. Изд. 6-е, перераб и доп. / под. ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. М., 2004. էջ 282 (автор главы – М. В. Кротов), Гражданское право России. Общая часть: курс лекций / отв. ред. О. Н. Садииков. М., 2001, էջ 319 (автор главы – О. Н. Садииков):

⁶ Աշխատանքում հիմնականում օգտագործվում է «շինծու գործարքին դիմելու նպատակ» հասկացությունը՝ նկատի ունենալով, որ շինծու գործարքի կնքման շարժառիթներն ու շինծու գործարքին դիմելու նպատակները շատ հաճախ նույնանում են՝ ունենալով իրավական նշանակություն, հետևաբար՝ դրանք դժվար է միմյանցից տարբերակել:

⁷ Стн նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՀՅԲԴ2/0086/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշում:

⁸ Стн «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»: Աշոտ Մուրադի Սուքիասյան: Երևանի Պետական Համալսարան, Երևան, 2009, էջ 1211:

քով ներդրում կատարելով՝ քողարկվում է անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ այդ վարձակալությունից ստացված շահույթից վճարման ենթակա հարկերը կրճատելու նպատակով: Միակողմ գործարքներով երբեմն քողարկվում են երկկողմ գործարքներ: Օրինակ՝ լիազորագրով ավտոտրանսպորտային միջոցներն օգտագործման տրամադրելով՝ քողարկվում են առուվաճառքի, անհատույց օգտագործման կամ վարձակալության պայմանագրերը:

Օրինակ՝ Ա.-ն և Բ.-ն, դիմելով դատարան, պահանջել են անվավեր ճանաչել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Գործում առկա է պարտավորագիր, որով Գ.-ն պարտավորվել է վեց ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ ոչ մի գործարք չկատարել, պարտքը մարելուց հետո բնակարանն անվանափոխել Ա.-ի անունով: Հիշյալ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պարտավորագրից հետևում է, որ Ա.-ի և Գ.-ի միջև կնքված առուվաճառքի պայմանագրով նրանց միջև իրականում ծագել են այլ իրավահարաբերություններ, քան այն հարաբերությունները, որոնք կողմերը երրորդ անձանց ներկայացրել են առուվաճառքի պայմանագիրը կնքելիս: Մասնավորապես՝ առուվաճառքի պայմանագիրը Գ.-ի համար հանդիսացել է երաշխիք՝ հետագայում Ա.-ին փոխառությամբ տրված գումարը հետ ստանալու համար, իսկ պարտավորագիրը վերջինիս համար հանդիսացել է երաշխիք՝ հետագայում իրեն պատկանող տունը հետ վերադարձնելու համար⁹:

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ երբ շինծու գործարքով քողարկվում է պարտավորության կատարման ապահովումը, նախքան շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառումը հարկ է ապացուցել հիմնական պարտավորության գոյության փաստը, քանի որ պարտավորությունների կատարման ապահովման միջոցները նպատակաուղղված են օժանդակելու իրենց նախատեսման համար հիմք

ծառայած պարտավորության կատարմանը և, հետևաբար՝ ինքնուրույն գոյություն ունենալ չեն կարող¹⁰: Բոլոր այն դեպքերում, երբ բավարար ապացույցներ չեն ներկայացվում՝ հիմնական պարտավորության առկայության փաստը հիմնավորելու համար, գործարքի նկատմամբ շինծու լինելու հիմքով պարտավորության ապահովման համապատասխան միջոցի կանոնները չեն կարող կիրառվել¹¹:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ պրակտիկայում դժվարություններ են առաջանում պարտավորության կատարման ապահովումը քողարկող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը հետգրնման իրավունք նախատեսող առուվաճառքի պայմանագրից տարբերակելիս: Օրինակ՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում կարող է նախատեսված լինել պայման, կամ կարող է գնորդի կողմից տրված լինել պարտավորագիր այն մասին, որ պայմանագրի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում ծագում է գնորդի՝ գույքը հետ վաճառելու պարտավորություն արդեն իսկ վճարված գումարով: Այստեղ որոշիչ նշանակություն է ստանում կողմերի կամքը: Հարկ է պարզել, թե արդյոք առուվաճառքի պայմանագիրը կնքելիս կողմերի կամքն ուղղված է եղել այլ գործարք քողարկելուն, այսինքն՝ պարտավորությունների կատարման ապահովման հարաբերությունների առաջացմանը, թե՛ կողմերն իսկապես մտադրված են եղել առաջացնելու առուվաճառքի հարաբերություններ¹²:

Այս հարցի վերաբերյալ հիշարժան է ԱՄՆ-ի Լուիզիանա նահանգի քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ սիմուլյացիայի կանխավարկած է դիտարկվում վաճառողի կողմից տիրապետման պահպանումը: Երբ վաճառված իրը մնում է վաճառողի փաստացի տիրապետման ներքո, ենթադրվում է, թե առուվաճառքը սիմուլյացիա է, և երբ դա առնչվում է վաճառողի ժառանգների ու պարտատերերի շահերին, կողմերը պետք է ապացուցեն, որ իրենց կնքած

⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-439(ՎԴ) քաղաքացիական գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշում:

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0134/02/13 քաղաքացիական գործով 2015 թվականի ապրիլի 30-ի որոշում:

¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0134/02/13 քաղաքացիական գործով 2015 թվականի ապրիլի 30-ի որոշում:

¹² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1776/02/13 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշում:

պայմանագիրը սիմուլյացիա չէ (2480-րդ հոդված):

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ենթադրյալ շինծու գործարքի վավերականության կանխավարկածն է գործում, սակայն շինծու գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործեր քննելիս դատարանները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն վաճառողի կողմից տիրապետման պահպանման փաստի առկայությանը:

ԱՄՆ-ի Լուիզիանա նահանգի քաղաքացիական օրենսգրքով առանձին կարգավորում է նախատեսված հետզնման իրավունք նախատեսող պայմանագրի համար: Այսպես՝ հետզնման իրավունքով առուվաճառքը սիմուլյացիա է, երբ գործի հանգամանքները վկայում են, որ կողմերի իրական մտադրություններն ուղղված են եղել պարտավորության ապահովման պայմանագիր կնքելուն: Այդ դեպքում գնորդի կողմից վարձակալության դիմաց կամ այլ եղանակով ստացված եկամուտը, պտուղները կամ այլ օգուտը կարող են դիտարկվել որպես տոկոսներ՝ վաշխառության մասին օրենքներին համապատասխան (2569-րդ հոդված):

Քողարկող գործարքի իրավական նպատակն այն իրավական արդյունքն է, որը կանխորոշված է տվյալ տեսակի գործարքը կարգավորող իրավական նորմերում, և որին կհասնեն գործարքի կողմերը, եթե գործարքը չլինի շինծու և կատարվեր: Օրինակ՝ առավել հաճախ կնքվող քողարկող գործարքներից է առուվաճառքի պայմանագիրը, որի իրավական նպատակն է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը և դրա դիմաց որոշակի դրամական հատուցում ստանալը: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ քողարկող գործարքի իրավական նպատակը չի իրականացվում, քողարկող գործարքի իրավական արդյունքն երբեք ավարտին չի հասնում:

Ինչ վերաբերում է քողարկված գործարքի իրավական նպատակին՝ դա հիմնականում համընկնում է իրավական արդյունքի հետ, այսինքն՝ նպատակն իրականացվում է: Այսպես՝ եթե շինծու (քողարկող) գործարքի նկատմամբ

դատական կարգով առջնություն հետևանքներ չեն կիրառվում, ապա գործում է այդ գործարքի վավերականության կանխավարկածը, և դրա քողի ներքո իրականացվում է թաքցված գործարքը: Կողմերն այդ դեպքում հասնում են իրենց համար ցանկալի իրավական արդյունքին: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ դատական կարգով հաստատվում է շինծու գործարքի առկայությունը, քողարկված գործարքի իրավական նպատակն իրականացվում է, եթե այդ գործարքը համապատասխանում է տվյալ տեսակի գործարքի կնքվածությանը և վավերականությանն օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Միաժամանակ՝ կարծում ենք, որ քողարկված գործարքի իրավական նպատակին հասնելը կարող է վկայել քողարկող գործարքի շինծու լինելու մասին: Այս կապակցությամբ Վ. Ն. Սոլովյովը նշել է, որ առուվաճառքի պայմանագիրը քողարկող նվիրատվության պայմանագրի շինծու լինելու մասին կարող է վկայել քողարկված գործարքի՝ առուվաճառքի պայմանագրի բոլոր էական պայմանների կատարման փաստը (առարկա, գին և այլն)¹³:

Գործարքը շինծու որակելու հարցում առանձնակի կարևորություն է ներկայացնում շինծու գործարքին դիմելու նպատակը: Շինծու գործարքին դիմելու հիմնական նպատակն է խուսափել գործարքի կողմերի համար «բացասական» հետևանքներից, որոնք կառաջանային, եթե քողարկված գործարքը կնքվեր բացահայտ կերպով: Այդպիսի հետևանքներ կարող են լինել գույքի բռնագրավումը, գույքի վրա արգելանք դնելը կամ բռնագանձում տարածելը կանխելը, հարկերը կրճատելը կամ հարկերից խուսափելը, վաշխառությունը, օտարերկրյա քաղաքացու կողմից հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու արգելքի պարագայում փաստացիորեն այդ իրավունքի ձեռքբերումը, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, ընդհանուր սեփականության իրավունքում վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունքը շրջանցելը: Ամուսնության ընթացքում գույք ձեռք բերելիս նվիրատվության շինծու պայմանագրին դիմե-

¹³ Стів Соловьев В.Н. “Настольная книга судьи по гражданским делам”//Ефимов Л.Ф., Зайцев В.Ю., Манохина Г.В. и др.; под ред. Толчеева Н.К. 2-е изд., перераб. и доп. М: Велби, Проспект, 2008, էջ 169:

լու նպատակ կարող է լինել այդ գույքի նկատմամբ մյուս ամուսնու սեփականության իրավունքի ծագումը կանխելը (որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք):

Պրակտիկայում շինծու գործարքին դիմելու նպատակները մեծ մասամբ իրավական բնույթ ունեն: Մինչդեռ երբեմն շինծու գործարքը կնքվում է այլ շարժառիթներով ևս, օրինակ՝ նվիրատվության պայմանագրով առուվաճառքի պայմանագիրը քողարկելու շարժառիթ կարող է լինել մեծ չափի գումար ունենալու հանգամանքը թաքցնելու ցանկությունը¹⁴: Նշվածի համատեքստում հարց է առաջանում, թե արդյոք շինծու գործարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարվում շինծու գործարքին դիմելու **իրավական բնույթի** որևէ «թաքնված» նպատակի առկայությունը: Կարծում ենք, որ այս հարցի պատասխանը պետք է փնտրել՝ ելնելով քաղաքացիական հարաբերությունների կարգավորման ոլորտում շինծու գործարքի անթույլատրելիության պահանջի նշանակությունից:

Ինչպես հայտնի է՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման (և՛ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս): Մինչդեռ քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքները, այդ թվում՝ այդ իրավունքները կամքի ինքնավարությամբ իրականացնելու և պայմանագրի ազատության սկզբունքներն օրենքով ենթարկվում են որոշակի սահմանափակումների: Պայմանագրի ազատության սկզբունքի՝ օրենքով նախատեսված սահմանափակումներից է շին-

ծու գործարքների անթույլատրելիությունը, ինչը, կարծում ենք, ինքնանպատակ չէ: Ցանկացած քաղաքացիական իրավունք, այդ թվում՝ պայմանագրի ազատությունը, կարող է օրենքով սահմանափակվել բացառապես այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար (և՛ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս):

Միաժամանակ՝ հարկ է նշել, որ շինծու գործարքները համարվում են կամքի արատով գործարքներ, քանի որ կողմերի՝ սահմանված ձևով արտահայտած կամահայտնությունը չի համապատասխանում նրանց ներքին կամքին¹⁵: Ինչպես նշում է Մ.Վ. Կրատենկոն՝ պայմանագրի տեսակի ընտրության ազատության ընդհանուր սահմանափակումն օրենքի այն պահանջն է, ըստ որի՝ կողմերի կամահայտնությունը պետք է համապատասխանի իրենց իրական կամքին¹⁶: Կամքի և կամահայտնության անհամապատասխանության բոլոր դեպքերը, ըստ Դ.Դ. Գրիմմի խոսքերի, կարող են ներառվել երկու խմբում՝ կանխամտածված և ոչ կանխամտածված: Կամքի և կամահայտնության կանխամտածված անհամապատասխանությունն առկա է, երբ գործարքը կնքվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու լուրջ մտադրության (կատակով գործարքներ) կամ երրորդ անձանցից կողմերի իրական մտադրությունները թաքցնելու նպատակով (ձևացված գործարքներ, որոնք ներառում են կեղծ և շինծու գործարքները)¹⁷: Ըստ Մ.Վ. Կրատենկոյի՝ կամքի և կամահայտնության անհա-

¹⁴ Տե՛ս թիվ ՍԴ1/0412/02/15 քաղաքացիական գործ: Մասնավորապես՝ հայցվորն իր դիրքորոշման շրջանակներում նշել է, որ պատասխանողը «չի ցանկացել, որ իրենց գյուղում իմանան, որ ինքը նման գումար ունի, որ ինքը գնել է այդ շենքը, այդ իսկ պատճառով խնդրել է ձևակերպել նվիրատվության պայմանագիր, այլ ոչ թե կնքել առուվաճառքի պայմանագիր»:

¹⁵ Տե՛ս << վճարել դատարանի՝ թիվ 3-1258 (ՏԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշում: Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (постатейный). Часть 1: учеб.-практич. комментарий / Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, Ю. В. Байгушева (и др.); под ред. А. П. Сергеева. – Москва: Проспект, 2012. էջ 453: Хейфец Ф.С.: “Недействительность сделок по российскому гражданскому праву”, М., 2000, էջ 84: Рабинович Н.В., “Недействительность сделок и ее последствия”.– Л.: Изд-во ЛГУ, 1960, էջ 86: О.А. Кузнецова, “Мнимые и притворные сделки в гражданском праве”, “Законодательство”, N 6, июнь 2006 г, էջ 13:

¹⁶ Տե՛ս “Злоупотребление свободой договора: частноправовые и публично-правовые аспекты”: Монография/М. В. Кратенко.– М.: Волтерс-Клувер, 2010, էջ 18:

¹⁷ Տե՛ս Гримм, Д.Д. “Лекции по догме римского права”: М. 2003, էջ 137-138:

մապատասխանությունը կարող է կապված լինել պայմանագրի բնույթի վերաբերյալ կողմերից մեկի մոլորության (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդված) կամ շինծու գործարք կնքելիս կողմերի դիտավորյալ գործողությունների հետ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված): Ըստ հեղինակի՝ վերջին դեպքում կարելի է խոսել պայմանագրի տեսակի ընտրության ազատության չարաշահման մասին՝ ի վնաս երրորդ անձանց շահերի (պարտատերերի, համասեփականատերերի, նախապատվության իրավունք ունեցող սուբյեկտների) կամ հանրային շահերի (անհիմն հարկային օգուտ ստանալը)¹⁸:

Համաձայնելով նշված տեսակետներին՝ ավելացնենք, որ, ի տարբերություն կամքի և կամահայտնության անհամապատասխանության հիմքով անվավեր համարվող մյուս գործարքների (էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության, խաբեության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության ներքո կնքված)՝ շինծու գործարքների համար սահմանված են անվավերության առանձնահատուկ հետևանքներ: Մասնավորապես՝ եթե շինծու գործարքով քողարկված գործարքը համապատասխանում է գործարքների վավերականությանը ներկայացվող ընդհանուր պահանջներին, ապա կողմերի միջև ձևավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են այդ գործարքին վերաբերող կանոնները: Այսինքն՝ այդ հարաբերություններին հաղորդվում է իրավական բնույթ:

Մեր կարծիքով՝ շինծու գործարքների անվավերության նման հետևանքներ նախատեսելու նպատակն է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումը՝ ելնելով երրորդ անձանց, պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Հետևաբար՝ չի կարելի խոսել շինծու գործարքի առկայության մասին բոլոր այն դեպքերում, երբ կողմերը շինծու գործարք կնքելիս չեն հետապնդել հակաիրավական բնույթի որևէ թաքնված նպատակ, որը

սպառնում է կամ կարող է սպառնալ պետության, երրորդ անձանց շահերին: Իհարկե, կողմերը կարող են առանց որևէ հակաիրավական նպատակ հետապնդելու կնքել գործարքներ, որոնցում առկա է կամքի և կամահայտնության անհամապատասխանություն: Նման դեպքում գործարքը կարող է անվավեր ճանաչվել, սակայն ոչ շինծու լինելու հիմքով, քանի որ չկա հակաիրավական նպատակ, հետևաբար նաև՝ երրորդ անձանց, պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտություն: Օրինակ՝ այդպիսի գործարքը կարող է անվավեր ճանաչվել օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդված):

Այս կապակցությամբ, կարծում ենք, հիշարժան է Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով նախատեսված շինծու գործարքի իրավակարգավորումը: Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավակարգավորման հիմնական սկզբունքն այն է, որ սիմուլյացիան (ձևացումը) ինքնին անօրինական չէ: Հետևաբար՝ կողմերն իրավունք ունեն կնքելու պայմանագիր, որը չի արտահայտում իրենց իրական համաձայնությունը: Ընդհանուր կանխավարկածն այն է, որ սիմուլյացիան ինքնին անօրինական չէ, եթե չի հետապնդում խարդախ նպատակ: Հետևաբար՝ առերևույթ պայմանագիրը ոչ առոչինչ է, ոչ վիճահարույց, այլ ի գորու չէ կողմերի համար պարտավորություններ առաջացնելու, քանի որ վերջիններիս միջև իրավահարաբերությունները կարգավորվում են նրանց միջև առկա իրական համաձայնությանը համապատասխան¹⁹:

Մեծ Բրիտանիայի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ շինծու գործարքը պետք է անարդարության տարրեր պարունակի: Այն հանգամանքը, որ համաձայնությունը պարզապես արհեստական է և չի առաջացնում դատարանի համար ցանկալի հետևանքներ (...) ինքնին իրավունք չի

¹⁸ Տե՛ս “Злоупотребление свободой договора: частноправовые и публично-правовые аспекты”: Монография/М. В. Кратенко.– М.: Волтерс-Клувер, 2010, էջ 18:

¹⁹ Տե՛ս Principles of European Contract Law and Italian Law edited by Luisa Antonioli, Anna Venezian. Published by Kluwer Law, International. 2005, էջ 284-286:

վերապահում դատարանին հաստատելու գործարքի շինծու բնույթը²⁰:

Նշված հարցի վերաբերյալ ՀՀ դատարանների մոտեցումները ևս տարբեր են: Այսպես՝ գործարքը շինծու որակելիս ոչ միշտ է, որպես ապացուցման ենթակա փաստ, վկայակոչվում շինծու գործարքին դիմելու որևէ նպատակի առկայությունը²¹: Սակայն կան գործեր, որոնցում դատարանը շեշտադրել է պայմանագրի կողմին քողարկելու որևէ նպատակի առկայությունն ապացուցելու անհրաժեշտությունը²²:

Այսպիսով՝ շինծու գործարքի առկայությունն ապացուցելիս պետք է կարողանալ ցույց տալ ոչ միայն գործարքի կողմերի կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը, այլ նաև շինծու գործարքով այլ գործարք քողարկելու նպատակի, շինծու գործարքին դիմելու որևէ հակահրավական նպատակի առկայությունը, քողարկող գործարքի իրավական նպատակի իրականացված չլինելը, իսկ այնուհետև՝ քողարկված գործարքի իրավական արդյունքի առկայությունը, այսինքն՝ իրավական նպատակին հասած լինելը:



²⁰ Տե՛ս Holly Doyle & Simon Passfield, Shams: When is a Transaction not a Transaction?: National Westminster Bank plc v Jones:

²¹ Տե՛ս, օրինակ՝ թիվ ԱՐԴ/2516/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2015թ. սեպտեմբերի 9-ի որոշում: Մասնավորապես՝ գործարքի կողմին քողարկող գործարքի վիճարկման վերաբերյալ քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ դատարանը հարկ է համարել պարզել հետևյալ իրավական հարցադրումները. արդյո՞ք մի կողմից հայցվորի և մյուս կողմից Ա.-ի կամքն ուղղված է եղել պայմանագրով քողարկված այլ պայմանագիր կնքելուն, և արդյո՞ք նշված գործարքն իրականում կնքվել է ոչ թե գործարքը ստորագրած անձանց, այս դեպքում՝ հայցվորի և Ա.-ի միջև, այլ՝ ուրիշ անձանց միջև: Արդյո՞ք պայմանագիրը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

²² Տե՛ս, օրինակ՝ թիվ ԱՐԴ/1028/02/14 քաղաքացիական գործով 2015 փետրվարի 18-ի վճիռ: Մասնավորապես՝ դատարանը նշել է. «(...) պարզ չէ, թե Ռուբեն Դարբինյանի՝ պայմանագրի ենթադրյալ կողմ լինելու պարագայում ի՞նչն է խոչընդոտ կամ արգելք հանդիսացել Ռուբեն Դարբինյանի կողմից առուվաճառքի պայմանագիրն անձամբ կնքելու համար: Այսինքն՝ բացակայում են պայմանագրի իրական կողմին քողարկելու իրական շարժառիթն ու նպատակը»:

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՅԱՆ

ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար –
գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՎԱՐԴԱՆ ՊՈԴՈՍՅԱՆ

Քաղաքագիտության մագիստրոս,
ԳՄՀԸ իրավական ծրագրի
ղեկավար Հայաստանում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են կառավարության կազմավորման և վարչապետին ազատելու հարցերում Հայաստանի Հանրապետության 2005թ. սահմանադրական փոփոխությունները, և ցույց են տրվում այն խնդիրները, որոնք այդ փոփոխությունների արդյունքով մնացին չլուծված:

Բանալի բառեր. սահմանադրական փոփոխություններ, կառավարության կազմավորում, Հանրապետության Նախագահ, վարչապետ, Ազգային ժողով, կառավարման կիսանախագահական համակարգ:

ГРАЙР ТОВМАСЯН

Руководитель – генеральный секретарь аппарата НС РА,
кандидат юридических наук, доцент,
докторант академии государственного управления РА

ВАРДАН ПОГОСЯН

Магистр политологии,
руководитель правовой программы
НМОС в Армении

**КОНСТИТУЦИОННЫЕ ИЗМЕНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 2005 ГОДА
ПО ВОПРОСАМ ФОРМИРОВАНИЯ ПРАВИТЕЛЬСТВА И ОСВОБОЖДЕНИЯ
ОТ ДОЛЖНОСТИ ПРЕМЬЕР-МИНИСТРА**

В статье представлены конституционные изменения Республики Армения 2005 года по вопросам формирования правительства и освобождения от должности премьер-министра. В статье показаны проблемы, которые остались нерешенными по данным изменениям.

Ключевые слова. конституционные изменения, формирование правительства, Президент Республики, премьер-министр, Национальное Собрание, полупрезидентская система правления.

HRAYR TOVMASYAN

The RA NA Chief of Staff – Secretary General,
PhD in Law, Associate Professor,
Postdoctoral Researcher of the Public
Administration Academy of RA

VARDAN POGHOSYAN

Master's in political science,
Head of the GIZ Legal Programme in Armenia

**THE CHANGES IN FORMING THE GOVERNMENT AND EXEMPTION OF THE
PRIME-MINISTER AFTER THE CONSTITUTIONAL CHANGES IN 2005 OF THE
REPUBLIC OF ARMENIA**

The article discusses the issues of forming the government and the exemption of Prime-Minister after the Constitutional changes in 2005 of the Republic of Armenia. As a result problems not solved with the help of Constitutional changes are shown.

Keywords: Constitutional changes, forming of the government, President of the Republic, Prime-Minister, National Assembly, semi-presidential form of governing.

ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱԼ

Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության ազգային փորձագետ,
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ,
ՀՀ կառավարման ակադեմիայի և
Արդարադատության ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու
արդարադատության առաջին դասի խորհրդական

ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ հստակորեն տարանջատվեցին և առանձին գլուխներում իրենց ամրագրումը ստացան դատական իշխանության և դատախազության՝ որպես պետական միասնական համակարգի վերաբերյալ դրույթները: 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխում ամրագրվեցին 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության վերաբերյալ ամրագրված նորմերից տարբերվող նոր իրավակարգավորումներ, որոնք իրավական հիմք դարձան «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցման սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքով ամրագրված նոր իրավակարգավորումների համապատասխանեցման համար: Հոդվածում ներկայացվում են դատախազության վերաբերյալ սահմանադրաիրավական յուրաքանչյուր իրավակարգավորման իրացման ուղենիշները՝ ներպետական օրենսդրական և միջազգային փորձի իրավահամեմատական վերլուծությամբ, ինչպես նաև միջազգային փաստաթղթերում ներկայացված դիրքորոշումների վերհանմամբ՝ միևնույն ժամանակ ներկայացնելով օրենսդրական համարժեք իրավական լուծումներ:

Բանալի բառեր. սահմանադրական բարեփոխում, դատախազության սահմանադրական կարգավիճակ, գլխավոր դատախազի հաղորդում, դատախազի իրավական պաշտպանություն, պետական շահերի պաշտպանություն, գլխավոր դատախազի ազատման հիմքերը, գլխավոր դատախազի տեղակալի նշանակում:

TAMARA SHAKARYAN

Council of Europe and European Union legal expert,
legal expert at the OSCE office in Yerevan
Lecturer at the Justice Academy of RA and
at the Public Administration Academy of the RA
First Class Councilor of Justice; PhD in Laws

MODERN GUIDELINES FOR THE IMPLEMENTATION OF THE CONSTITUTIONAL GROUNDS FOR THE PROSECUTION OFFICE

The provisions on judiciary and prosecution office are set separately under the Constitution of RA with the 2015 amendments, and these two institutions are considered as separate units of unified state governance system therein. Chapter 8 of the RA Constitution with 2015 amendments sets provisions regarding prosecution office which are different from those set under the RA Constitution with 2005 amendments. Such new rules serve as basis for drafting new legal regulations under the Law on Prosecution Office in compliance with the constitutional reform in RA. The article presents modern guidelines for the implementation of each constitutional ground for the Prosecution office through drawing comparison between domestic legislation and international practice, revealing the requirements of international documents and at the same time proposes adequate legal solutions.

Keywords: constitutional reforms, constitutional status of the prosecution office, report of the Prosecutor General, legal protection of a prosecutor, protection of state interests, grounds of dismissal of Prosecutor General, appointment of Deputy Prosecutor General.

ТАМАРА ШАКАРЯН

Национальный эксперт Совета Европы и Европейского Союза, национальный эксперт по правовым вопросам офиса ОБСЕ в Ереване, преподаватель Академии государственного управления РА и Академии юстиции РА, кандидат юридических наук, советник юстиции первого класса

**СОВРЕМЕННЫЕ НАПРАВЛЕНИЯ РЕАЛИЗАЦИИ
КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ОСНОВ ПРОКУРАТУРЫ**

Изменениями 2015 года Конституцией РА были разделены и зафиксированы в отдельных главах положения относительно судебной власти и прокуратуры как единой государственной системы, теми же изменениями в 8-ой главе Конституции РА были зафиксированы новые, отличные от норм, зафиксированных изменениями 2005 года, правовые регулирования относительно системы прокуратуры, которые стали правовой основой для приведения ряда положений закона РА «О прокуратуре» в соответствие с оформленными в результате осуществления конституционно-правовой реформы новыми правовыми регулированиями. В статье представлены направления каждого правового регулирования относительно прокуратуры со сравнительным анализом внутригосударственного законодательства и международного опыта, с выявлением позиций, отраженных в соответствующих международных документах, а также с предложением конкретных законодательно-правовых решений.

Ключевые слова: конституционная реформа, конституционный статус прокуратуры, доклад генерального прокурора, правовая защита прокурора, защита государственных интересов, основания освобождения генерального прокурора, назначение заместителя генерального прокурора.

* * *

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

Պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԵՐԸ**

Հոդվածը նվիրված է «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացման հեռանկարները» թեմային, հոդվածի շրջանակներում համակարգված վերլուծության առարկա են հանդիսացել աշխարհում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի հիմնական մոդելները: Հեղինակը նշում է, որ ՀՀ-ում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները բավարար երաշխիքներ չեն ստեղծում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար: Ըստ հեղինակի՝ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին, որը կունենա բավարար իրավական և քաղաքական երաշխիքներն իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար:

Բանալի բառեր. կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին:

АЙК КЕСОЯН

Аспирант Академии государственного управления
Республики Армения

**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ИНСТИТУЦИОНАЛЬНОЙ СИСТЕМЫ БОРЬБЫ С
КОРРУПЦИЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Статья посвящена теме “Перспективы развития институциональной системы борьбы с коррупцией в Республике Армения”, в рамках статьи предметом системного анализа послужили действующие в мире основные модели институциональной борьбы с коррупцией. Автор отмечает, что действующие в РА институциональные механизмы борьбы с коррупцией не создают достаточных гарантий для эффективной борьбы с коррупцией. По мнению автора, для эффективной борьбы с коррупцией в РА необходимо создать специализированный орган борьбы с коррупцией, который будет обладать достаточными правовыми и политическими гарантиями для эффективного осуществления своей деятельности.

Ключевые слова: универсальная модель борьбы с коррупцией, превентивная модель борьбы с коррупцией, правоохранительная модель борьбы с коррупцией, специализированный орган борьбы с коррупцией.

HAYK KESOYAN

Phd student of Public administration academy of the Republic of Armenia

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF THE INSTITUTIONAL SYSTEM FOR COMBATING CORRUPTION IN THE REPUBLIC OF ARMENIA

The article is devoted to the theme “Prospects of development of the institutional framework of fighting corruption in the Republic of Armenia”, within the framework of the subject of the article system analysis served as acting in the world of basic models of the institutional fight against corruption. The author notes that the existing institutional mechanisms of fight against corruption in RA do not provide sufficient guarantees for the effective fight against corruption. The author believes that an effective fight against corruption in Armenia needs to create a specialized body to combat corruption, which will have sufficient legal and political guarantees for the effective implementation of its activities.

Key words: universal model of the fight against corruption, preventive model of the fight against corruption, the law-enforcement model to combat corruption, a specialized body to combat corruption.

* * *

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության հնֆորմացիոն կենտրոնի պետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՆԻ ԹԵՐԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ

ԱՐԱՄ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի քրեաբան

ՀՀ-ՈՒՄ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ)

Հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառական համալիրի, հանցավորությանը նպաստող գործոնների ուսումնասիրությունը, ինչպես նաև հանցագործությունների դեմ պայքարի պրակտիկական ցույց են տվել, որ հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում էական դեր է կատարում տուժողը: Հանցագործությունից տուժողի անձնային առանձնահատկությունները, հանցագործությունից առաջ և դրա ընթացքում նրա դրսևորած վարքագիծը շատ դեպքերում նպաստում են հանցանքի կատարմանը, հանցավորի մեջ ձևավորում են հանցանք կատարելու դիտավորություն կամ հեշտացնում են հանցանքի կատարումը:

Բանալի բառեր. վիկտիմոլոգիա, քրեաբանություն, հանցագործություն, ավազակություն, կողոպուտ, զոհ:

АРМЕН ГУКАСЯН

Начальник Информационного центра Полиции РА, Научный советник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА, кандидат юридических наук

АНИ ТЕРЗЯН

Социолог Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА

АРАМ СИРЕКАНЯН

Криминолог Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА

НЕКОТОРЫЕ КРИМИНОЛОГИЧЕСКИЕ И ВИКТИМОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГРАБЕЖА И РАЗБОЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ)

Изучение причинного комплекса преступности и отдельных ее видов и факторов, влияющих на преступность, а также практика борьбы с преступностью показали, что потерпевший имеет важную роль в причинно-следственном механизме преступного поведения. Личностные особенности жертвы, ее поведение до и во время преступления во многих случаях способствуют совершению преступления, в преступнике формируют намерение совершить преступление или облегчают совершение преступления.

Ключевые слова: виктимология, криминология, преступность, разбой, грабеж, потерпевший.

ARMEN GHUKASYAN

Head of the Information center of the Police of RA, scientific adviser of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA, PhD

ANI TERZYAN

Sociologist of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA

ARAM SIREKANYAN

Criminologist of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA

SOME CRIMINOLOGICAL AND VICTIMOLOGICAL FEATURES OF ROBBERIES AND BURGLARIES IN THE REPUBLIC OF ARMENIA (RESULTS OF RESEARCH)

The study on the causal complex of crime and its separate types, on the factors fostering crime, as well as the practice of fight against crime shows that the victim has an essential role in the causal mechanism of the criminal behavior. Victim’s personal peculiarities, his/her behavior before the crime and during it in many cases contributes to the commitment of crime, form the intent to commit a crime or facilitate its commitment.

Keywords: victimology, criminology, crime, burglary, robbery, victim.

* * *

ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս, Իրավագիտության հայցորդ

ԼՂՀ ՕՍԲՈՒԴՄԱՆԵՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Շնորհիվ այն բանի, որ օմբուդսմենը պետական մարմինների համակարգում ունի անկախ դիրք և անփոփոխելի է, իրենց խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության համար նրան կարող է դիմել յուրաքանչյուր քաղաքացի՝ առանց որևէ խտրականության ու բողոքների և գանգատների քննության ձևաճանաչական ընթացակարգերի, քաղաքացիներին իրավական անվճար օգնություն մատուցելու հնարավորությամբ. օմբուդսմենի հեղինակությունը գտնվում է բարձր մակարդակի վրա: Սկանդինավյան ծագումով հանրային այս ինստիտուտն իր տեղն է գտել նաև ԼՂՀ իրավական համակարգում:

Հիմնարար բառեր. Օմբուդսմեն, մարդու և քաղաքացու իրավունքներ, տարեկան զեկույց, Սահմանադրություն, չճանաչված պետություններ:

СОСИ АЛЕКСАНЫАН

Лектор кафедры права Арцахского государственного университета

**РОЛЬ И МЕСТО УПОЛНОМОЧЕННОГО ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА НКР
ПО ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА**

Особая популярность и авторитет института омбудсмана объясняются многими демократическими чертами, характеризующими его статус и обеспечивающими эффективность его деятельности: независимым положением в системе государственных органов; несменяемостью в течение всего срока полномочий парламента, которым он назначается, открытостью и доступностью для всех граждан, нуждающихся в защите своих прав и свобод; отсутствием формализованных процедур разбирательства жалоб и обращений; бесплатностью оказания гражданам помощи и т.д. Скандинавский институт омбудсмана нашел свое отражение в правовой системе НКР.

Ключевые слова. Уполномоченный по правам человека, права человека и гражданина, годовой отчет, Конституция, непризнанные государства.

SOSY ALEKSANYAN

The lector of Law faculty
Of Artsakh State University

THE ROLE AND PLACE OF THE OMBUDSMAN OF NKR IN THE PROTECTION OF HUMAN RIGHTS

Due to the fact that in the system of state bodies, the Ombudsman has an independent position and irreplaceable, their violated rights and freedoms of every citizen can turn to him for protection, without any discrimination and formal procedures, the possibility of providing legal assistance free of charge, Ombudsman's authority is at a high level. Scandinavian origin of this institute has also found its place in the legal system of NKR.

Keywords. Ombudsman, human and civil rights, annual report, Constitution, unrecognized states.

* * *

ԱՆԻ ՄՈՒԹԱՅՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչության ավագ մասնագետ,
Արդարադատության ակադեմիայի դասընթացավար

«ՆՊԱՏԱԿԻ» ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՈՒՄ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսացել գործարքը շինծու որակելու համար որոշիչ նշանակություն ունեցող «նպատակ» հասկացության իրավական դրսևորումները: Մասնավորապես՝ օրենսդրական կարգավորման, տեսական գրականության, դատական պրակտիկայի և օտարերկրյա փորձի վերլուծության արդյունքով տարբերակվել են «շինծու գործարքի նպատակը» (այլ գործարք քողարկելը), «շինծու գործարքին դիմելու նպատակը (շինծու գործարքի կնքման շարժառիթը)», «քողարկող գործարքի իրավական նպատակը» և «քողարկված գործարքի իրավական նպատակը»: Հեղինակը եզրահանգել է, որ քողարկող (շինծու) գործարքի իրավական նպատակը չի իրականացվում, քողարկող գործարքի իրավական արդյունքը երբեք ավարտին չի հասնում: Ինչ վերաբերում է քողարկված գործարքի իրավական նպատակին՝ դա հիմնականում համընկնում է իրավական արդյունքի հետ, այսինքն՝ նպատակն իրականացվում է: Հեղինակը գործարքը շինծու որակելու հարցում առանձնակի կարևորել է շինծու գործարքին դիմելու նպատակը՝ ընդգծելով, որ գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է այդ գործարքին դիմելու որևէ հակաիրավական նպատակի (շարժառիթի) առկայությունը:

Կատարված ուսումնասիրության շնորհիվ՝ հեղինակը փաստել է, որ շինծու գործարքի առկայությունն ապացուցելիս պետք է կարողանալ ցույց տալ ոչ միայն գործարքի կողմերի կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը, այլ նաև շինծու գործարքով այլ գործարք քողարկելու նպատակի, շինծու գործարքին դիմելու որևէ հակաիրավական նպատակի առկայությունը, քողարկող գործարքի իրավական նպատակի իրականացված չլինելը, իսկ այնուհետև՝ քողարկված գործարքի իրավական արդյունքի առկայությունը, այսինքն՝ իրավական նպատակին հասած լինելը:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 95 2016

Բանալի բաներ. շինծու գործարք, առոչինչ, իրավական նպատակ, շինծու գործարքի նպատակ, քողարկել, շինծու գործարքին դիմելու նպատակ, շինծու գործարքի կնքման շարժանիթ, քողարկող գործարք, քողարկված գործարք:

АНИ МУТАФЯН

Аспирант Ереванского государственного университета кафедры гражданского права, старший специалист управления правового анализа Судебного департамента РА, ведущая курса в Академии юстиции.

ПРАВОВОЕ ЗНАЧЕНИЕ “ЦЕЛИ” В ПРИТВОРНЫХ СДЕЛКАХ

В рамках статьи предметом исследования послужили правовые выявления понятия “цели”, имеющей решающее значение для квалификации сделки как притворной. В частности, в результате анализа законодательного регулирования, теории, судебной практики, а также иностранного опыта дифференцировались “цель притворной сделки” (прикрытие другой сделки), “цель использования притворной сделки” (мотив заключения притворной сделки), “правовая цель прикрывающей сделки” и “правовая цель прикрываемой сделки”. Автор сделал вывод, что правовая цель прикрывающей (притворной) сделки не исполняется, правовой результат прикрывающей сделки никогда не доводится до конца. Что касается правовой цели прикрываемой сделки, то она в основном совпадает с правовым результатом, то есть цель достигается. Для квалификации сделки, как притворной, автор придавал особое значение цели использования притворной сделки, подчеркивая, что для квалификации сделки в качестве притворной необходимо наличие какой-то противоправной цели (мотива).

В результате проведенного исследования, автор пришел к выводу, что для доказательства наличия притворной сделки нужно показать не только несоответствие воли и волеизъявления сторон сделки, но и наличие цели прикрыть другую сделку с помощью притворной сделки, наличие какой-то противоправной цели использования притворной сделки, неисполнение правовой цели прикрывающей сделки, а после – наличие правового результата прикрываемой сделки, то есть достижение правовой цели.

Ключевые слова. притворная сделка, ничтожность, правовая цель, цель притворной сделки, прикрывать, цель использования притворной сделки, мотив заключения притворной сделки, прикрывающая сделка, прикрываемая сделка.

ANI MUTAFYAN

Phd student at Yerevan State University, faculty of law, chair of civil law, senior specialist of the Legal analysis division of the Judicial Department of the Republic of Armenia, trainer at the Justice Academy.

THE LEGAL ROLL OF THE “PURPOSE” IN SHAM TRANSACTION

The main objects of the article are the legal aspects of the concept of legal purpose, having decisive importance for qualifying the transaction as sham. Particularly, as the result of the analysis of the legislation, theoretical literature, judiciary practice and foreign experience the author has distinguished “the purpose of sham transaction” (to hide another transaction), “the purpose of using sham transaction (sham transaction motive),” “the legal purpose of concealing transaction” and “the legal purpose of hidden transaction”. The author has concluded that the legal purpose of concealing (sham) transaction is not carried out, the legal result of concealing transaction never reaches the end. Concerning the legal purpose of hidden transaction, it generally coincides with the legal result, i.e. the purpose is accomplished. In qualifying the transaction as sham the author has attached particular importance to the purpose of using sham transaction emphasizing that in order to qualify transaction as sham it is necessary that there be an unlawful purpose (motivation) of using that transaction.

The author has stated that to prove the existence of a sham transaction it’s necessary to show not only the mismatch between the expression of will and the will of the transaction parties, but also the existence of purpose to conceal another transaction by sham transaction, the presence of any illegal purpose of using sham transaction, unaccomplishment the legal purpose of the concealing contract, then the presence of the legal result of hidden transaction, that is the accomplishment of the legal purpose.

Keywords: sham transaction, void, legal purpose, purpose of sham transaction, conceal, purpose of using sham transaction, sham transaction motive, concealing transaction, hidden transaction.

ՀՀ ՊԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունն առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: